# Ազգ

Azg

**25 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020 ՈՒՐԲԱԹ 43(5640)**

ISSN 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## Ճանապարհենք հինը, դիմավորենք նորը

**Նախորդ տարվա մեր վերջին՝ տոնական համարի 1-ին էջում, մեր տաղանդավոր երգիծանկարիչը՝ Սուքիաս Թորոսյանը, նույնինքն Toto-ն, մարգարեացել էր. Ձմեռ պապը լայն բացել էր 2020-ի դարպասները եւ թողել, որ առնետները մտնեն ներս: Դա covid-19-ի առնետներն էին, որոնց անզոր եղավ մեր կառավարությունը դիմադրել: Կառավարությունը անզոր եղավ նաեւ ավելի վտանգավոր, ավելի մահաբեր՝ պատերազմի առնետներին դիմադրելու:**

**Փակենք աղետաբեր տարին ու բացենք նորը: Հավաքենք մեր ուժերը, վերականգնենք մեր կամքը, մեր հավատը, մեր դիմադրողականությունը: Թող գա Բարին, «տոնական» կոչվող այս օրերին երախտագիտությամբ հիշենք մեր զոհված տղաներին, օգնենք նրանց եւ անհետ կորածների ընտանիքներին: Հեռո՛ւ մեզնից բոլոր ծուլությունները, ուրախացնենք մանուկներին, նաեւ՝ մեր վիրավոր մարտիկներին, օգնենք տեղահանվածներին, լարենք մեր ուժերը:**

*Մեր առաջիկա համարը՝ 2021 հունվարի 16-ին: Մինչ այդ՝ Տերը մեզ հետ:*

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Մի՞թե կորցրել ենք ինքնապաշտպանության բնազդը

Բնազդներից առաջինը՝ ինքնապաշտպանության բնազդը, կարծես լքել է մեզ, ավելի ճիշտ՝ մենք ենք լքել նրան: 44-օրյա պատերազմի ամբողջ տեւողության ասացինք ու կրկնեցինք, որ սա մեր գոյութենական կռիվն է, անհատի, ազգի, պետության գոյության կռիվը ցեղասպան ոսոխի դեմ: Անհատը՝ զինվորն ու սպան, պատրաստ էր կռվելու եւ կռվում էր, ազգը պատրաստ էր զոհողության, նույնիսկ ոգեւորված՝ հաղթանակի հեռանկարով: Նույնիսկ քաղաքական ընդդիմությունն էր մի կողմ թողել ներքին խժդժությունների դեմ պայքարը եւ լծվել Արցախի փրկության գործին: Անգամ մամուլը, քիչ թե շատ տեղյակ ճակատային գծում կատարվածից՝ աշխատում էր բարձր պահել հասարակական տրամադրությունները՝ «հաղթելու ենք»-ի հույսով: Միայն ռազմաքաղաքական, ավելի շուտ՝ քաղաքառազմական ղեկավարությունն էր, որ չկարողացավ օգտագործել անհատի եւ հավաքականության ներուժը, նույնիսկ չկարողացավ կանոնավոր նահանջ կազմակերպել դեպի ելման դիրքեր՝ հզոր պատվար կազմելու թշնամու առաջխաղացքի դիմաց: Պատճառները բազմաթիվ են, իրարամերժ, տարատեսակ, դավադրական ու դավաճանական: 2500 տարի առաջ Դարեհ 1-ինի խոսքը կրկին իրականություն է դառնում՝ «Հայերին անհնար է հաղթել, նրանց կարելի է բաժանել»:

Եվ հիմա՝ բաժանված, կտոր-կտոր եղած Հայաստան եւ Արցախ, պառակտված եւ հուսալքված, բարոյալքված հասարակություն, շվար ժողովուրդ, որը չգիտի իր մեռելներն սգա՞, իր անհայտ կորած տղաներին փնտրի՞, զոհվածների մարմինները հավաքի՞, թե՞ սոցիալական իր հարցերը լուծի, ընտանիք կերակրի, համավարակի դեմ պայքարի: Եվ այդ բոլորը, ինչպես երեկ կառավարության շենքը շրջափակած քաղաքացիների առջեւ բնորոշեց միացյալ ընդդիմության վարչապետի թեկնածու Վազգեն Մանուկյանը, թուրք-ադրբեջանական «սողացող» ագրեսիան՝ այժմ Սյունյաց աշխարհի դեմ, վաղը՝ Տավուշի, այնուհետեւ...

Այդ ագրեսիան նոր չէ. սովետական տասնամյակներին աննկատ էր կրկնվում եւ հանդիպում հայ կոմունիստ ղեկավարների խելացի, հեռատես, ինքնապաշտպանության հզոր բնազդ ունեցող պատասխանատուների դիմադրությանը: Սովետական պայմաններում անգամ նրանք այնպես էին արել, որ, օրինակ, ազերիները Շամշադինի շրջան կարող էին մտնել միայն կանաչի եւ բանջարեղեն վաճառելու, այն էլ՝ մինչեւ կեսօրվա ժամը 2-ը. ազերիներին թույլատրված չէր այնտեղ պառկել: Նույնը՝ ավելի դժվարին պայմաններում, կատարվում էր Սյունիքում՝ Կապանում եւ շրջակա հինավուրց հայկական բնակավայրերում, որոնք այսօր, հատ-հատ, մասմաս, տուն առ տուն հանձնվում են թշնամու ողորմածությանը՝ վարչապետի աթոռը զոռով զբաղեցրած մոլագարի երեւակայության մեջ միայն գոյություն ունեցող «անվտանգության նկատառումներով»... Ամենեւին անվտանգ չէ Հայաստանը, պատերազմական դադար է միայն: Երեկ Ալիեւը զբոսնում էր Իշխանաձորում, վաղըման կգա Կոռնիձորում: Էրդողանը իրականացնում է Դեմիրելի, Օզալի, Էնվերի, Քեմալի եւ մյուս ոճրագործների երազանքը՝ ոչնչացնել պահանջատեր հայությանը, մեր հիշողությունից ջնջել Ցեղասպանությունը, ստրկացնել վերջին պատառիկ մնացած մեր երկիրը, պետությունն ու ժողովրդին:

Դժնի ու դժբախտ այս կացության դիմաց շատերը, շատ-շատերը, պահանջում ենք մոլագարի հրաժարականը: Ճիշտ ենք անում, վաղուց, դեռ 44-օրյա պատերազմից էլ առաջ պետք էր նույնը պահանջած լինեինք: Ոչ միայն նրա հրաժարականը, այլեւ նրա մեղսակիցներինը, օտարամոլ եւ օտարոտի այն խմբակինը, որը 2,5 տարի ամեն բան արեց ներսից քայքայելու մեր պետությունը, բաժանելու, պառակտելու մեր ժողովրդին, կազմաքանդելու պետական կառույցները, թուլացնելու պաշտպանունակությունը, իրեն ենթարկեցնելու նաեւ Արցախը:

Պատերազմի ընթացքում եւ այնուհետեւ մեղսակիցների այդ խմբակին միացան նաեւ մեր գեներալները, որոնք ճագարների պես ենթարկվեցին մոլագարի քմահաճ հրամաններին, հանդուրժեցին նրա կնոջ քմահաճույքները: Նրանք պատմությունից չգիտեի՞ն, որ Հիտլերն անգամ, ի վերջո, ինքնասպան լինելուց առաջ հանցանքը գցել էր իր մեծատաղանդ գեներալիտետի վրա: Ինչո՞ւ պաշտպանությունը, մեր մարտունակ բանակի գործողությունների համակարգումը չվերցրեցին իրենց ձեռքը: Ինչո՞ւ թողեցին, որ մոլագարն զբաղվի իր չիմացած ու չհասկացած գործերով՝ պատերազմի հրահրում այն դեպքում, երբ թշնամին սպառազինության վրա ծախսել էր 24 մլրդ դոլար՝ մեր 4 մլրդ.ի դիմաց: Մի՞թե նրանք էլ էին կորցրել ինքնապաշտպանության բնազդը: Չգիտեի՞ն, որ մոլագարը մեղքը ի վերջո գցելու է իրենց վրա եւ արդեն գցում է. «Ես թիվ 1 պատասխանատուն եմ, բայց թիվ 1 մեղավորը չեմ»:

Այդ բնազդը կորցրել է մեր ժողովրդի մեծ մասը, այլապես այսքան սակավաթիվ չէր լինի հրաժարական պահանջողների քանակը: Այս ընթացքով շուտով ավելորդ է դառնալու որեւէ պահանջ, որեւէ հրաժարում: Ինքնապաշտպանության բնազդից զրկված երկրում ի՞նչ նշանակություն ունի, թե ո՞վ է վարչապետ:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Անցնող տարին եւ մենք

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ

պգդ, պրոֆեսոր

Այս տարին յուրահատուկ էր: Ռուսները այդպիսիներին անվանում են **զերկալնի** կամ **սիմետրիկ** («зеркальным или симметричным»), քանի որ այն բաղկացած է երկու կրկնվող թվերից, իսկ այդպիսի թվերն այնքան էլ հաճախ չեն հանդիպում: Հաջորդն, օրինակ, 3030 թվականն է: Փորձը ցույց է տալիս, որ այդ տարիները լինում են կա՛մ շատ հաջողակ, կա՛մ՝ ծայրահեղ վատ: Իսկ ամենավտանգավորն այն է, որ այդպիսակ տարիներին սովորաբար կարեւոր դերակատարություն են ունենում արկածախնդիր բնույթ ունեցողները: Մեր դեպքում դա լիովին համապատասխանեց իրականությանը...




Իրատես լինենք, իսկ իրատես լինելը հենց այսօրվա աշխարհաքաղաքական զարգացումների տեսանկյունից թելադրում է ունենալ ինքնիշխան եւ կենսունակ պետություն: Դրա համար անհրաժեշտ էր նախ՝ պաշտպանել եղածը, հետո ուղիներ որոնել քարը քարի վրա դնելու եւ, ի վերջո սեւրյան երազին հասնելու համար: Սակայն իրատես լինելուն զուգահեռ պետք է նաեւ հեռատես լինել: Մի բան, որը մեր դեպքում այնքան էլ մոտ չէ իրականությանը:

Տարեվերջ է: Սովորաբար մարդիկ ամփոփում են անցած տարին, նշում դրա լավ ու վատ կողմերը, ձեռքբերումներն ու կորուստները: Սակայն այս անգամ շատ դժվար է, հայերեն շարքային բառերով՝ անհնարին, արտահայտել տարվա ազգիս բերած դժբախտությունները ու անդառնալի կորստի ցավը: Ասում են՝ մեկ-երկու մարդու սպանությունը հանցագործություն է, հազարներինը՝ վիճակագրություն: Չգիտեմ ում կողմից, բայց շատ անսիրտ է ասված: Չէ որ հազարների խեղված ճակատագրեր ունեցանք, չիրականացած երազանքներ, չկազմված ընտանիքներ ու հազարավոր մանկան ճիչեր չեն լսվելու...

Հայկական բարձրավանդակ անունով պատմական Հայաստան ենք ունեցել, որի տարածքը շուրջ 400.000 քառ. կմ. էր: Այն ո՛չ արեւելյան Թուրքիա եւ ո՛չ էլ Անատոլիա էր: Այդ հսկայածավալ Հայաստանից դարերի ընթացքում մեզ մնաց 29.743 քառ. կմ. տարածքով Հայաստանի Հանրապետությունը եւ հազարավոր ազատամարտիկների արյան գնով ու 1991 թ. սեպտեմբերյան հռչակագրով ազատագրված Արցախի Հանրապետության 11.458 քառ. կմ. հողատարածքը:

Սակայն Արցախյան հայրենական պատերազմի վերջին իրադարձությունների ավարտին, 2020 թ. նոյեմբերի 9-ին, Ադրբեջանի, Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ կնքված «հայտարարության» համաձայն, որը հայ հասարակությունը «անձնատվության (կապիտուլյացիայի) նվաստացուցիչ փաստաթուղթ» անվանեց, հայերն Ադրբեջանին զիջեցին Արցախի տարածքի մոտ 80 տոկոսը, այսինքն՝ շուրջ 8.280 քառ. կմ.: Այսինքն՝ հայ ժողովուրդը դարերի ընթացքում կորցրել է իր պատմական տարածքի ավելի քան 90 տոկոսը: Հիրավի, դառնակսկիծ իրողություն է սա:

Ավելացնենք, որ 2000 տարի առաջ պատմական Հայաստանում ապրող հայ ազգաբնակչության թիվը շուրջ 2,5 միլիոն է եղել: Իսկ այդ ժամանակ ամբողջ աշխարհի բնակչությունը եղել է շուրջ 300 միլիոն: Այսինքն՝ աշխարհի 120 բնակիչներից մեկը հայ է եղել: Մեր օրերում Երկիր մոլորակի բնակչությունը շուրջ 7,5 միլիարդ է հաշվվում, որից մոտավորապես 3 միլիոնը բնակվում է Հայաստանի եւ Արցախի Հանրապետություններում: Եթե դրան գումարենք սփյուռքահայությանը, ապա այսօր աշխարհում ապրող հայությունը մոտավոր հաշվարկով 10 միլիոն է կազմում: Այնինչ, աշխարհի բնակչության թվաքանակի աճի միջին մակարդակին համապատասխան այսօր հայության թվաքանակը կկազմեր ավելի քան 60 միլիոն: Այսինքն՝ բազմանալու, հզորանալու եւ մեր ունեցածը պահելու փոխարեն, մենք բոլոր առումներով նահանջել ենք եւ կորցրել հայրենի հողատարածքի շուրջ 367.079 քառ. կմ.-ը եւ ունեցել ենք հայ բնակչության 50 միլիոն աճի կորուստ: Իսկ այս դեպքում ամեն ինչում միայն օտարին ու վայրագ թշնամուն մեղադրել եւ հավիտենապես զոհ դարձած լինելու հոգեբանությունը որդեգրելը՝ որեւէ տեղ չի հասցնի: Ընդհակառակը, այս ցավալի իրողություններից հետո գոնե պետք է սթափվենք ու մեզ հարց տանք. ինչպե՞ս պահենք գոնե այն, ինչ այսօր ունենք: Գոնե այսօր պետք է հասկանանք, որ ունենալը եւ ունեցածը պահել կարողանալը՝ տարբեր երեւույթներ են, իսկ հայրենասիրությունը՝ սերունդների թողած ավանդը ճիշտ գնահատելու, այն մշակել կարողանալու, ունեցածը պահպանելու եւ այն սերունդներին փոխանցելու նվիրական հանձնառություն է:

⇨10

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Իրա՞ն, թէ՞ Պարսկաստան

Ամէն անգամ որ մեր շուրջի երկիրներուն մասին կը խօսինք, սովորաբար կը հաստատենք Թուրքիոյ եւ Ատրպէյճանի թշնամի երկիրներ ըլլալը, Վրաստանի համար կը տատանինք բարեկամ ըսել, սակայն չենք ուզեր նաեւ միւս երկուքին նման թշնամի ալ ըսել։ Իսկ Իրանի պարագային, անոր մէջ ոչ մէկ թշնամանք տեսնելով, մեր միակ յոյսը անոր կը կապենք։

Սակայն վերջին (վերջի՞ն) պատերազմին յայտնի եղաւ, որ Իրանն ալ իր հաշիւները առաջ քշելով՝ մէյ մը յայտարարեց, թէ ինք կողմ է Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան, ապա՝ պատերազմի աւարտէն ետք, շնորհաւորեց Ատրպէյճանը, անոր տարած յաղթանակին ու «գրաւուած» հողատարածքներու վերադարձին համար։

Ես եւ, վստահ եմ, ինծի նման շատեր զարմացան Իրանի այս վերաբերմունքին համար, որմէ եթէ ոչ զօրակցութիւն, գոնէ չէզոք կեցուածք մը կ՚ակնկալէինք։

Մենք միշտ կարծած ենք, որ Իրանն ու Ատրպէյճանը չեն կրնար բարեկամանալ, այնքան ատեն, որ հիւսիսային Իրանի Ատրպատական նահանգը կայ եւ որուն բնակիչները իբր ազերիներ են եւ Ատրպէյճանը աչք ունի այդ տարածաշրջանին վրայ, իբր թէ վերամիացնելու կիսուած «ազերի» ժողովուրդը։ Սակայն, այս փափաքին ետին կայ նաեւ թրքական համաթուրանականութեան ծրագիրը, քանի որ իրանեան Ատրպատականը Ատրպէյճանին միանալով, ճամբան կը բացուի դէպի թիւրքաբարբառ արեւելեան երկիրները։

Մենք փակուած էջ կը համարենք Աւարայրի ճակատամարտը, եւ նոյնիսկ մեր եւ Պարսկաստանի պատմական թշնամութեան մասին խօսիլն իսկ աւելորդ կը նկատենք այս օրերուն, երբ մեր յարաբերութիւնները Իրանի Իսլամական Հանրապետութեան հետ բաւական լաւ են։ Իրանը դէպի արտաքին աշխարհ մեր երկու դուռներէն մէկն է։ Հիմա, ի՞նչ դիրք բռնելու է մեր պետութիւնը. նախկինին նման շարունակելո՞ւ է բարի դրացնութիւնը, ի հեճուկս Իրանի ըրածին, թէ՞ վերապահութեամբ մօտենալու է անոր։

Այսքան լճացած ու կղզիացած վիճակի մէջ ուրիշ երկիր կա՞յ աշխարհի վրայ։ Ափ մը Հայաստան ու այսքան վտանգալից իրավիճակ։ Ամէն երկիր իր շահը կը փնտռէ, իսկ մենք չենք ալ գիտեր, թէ ո՞ւր փնտռելու ենք մե՛ր շահը։ Քաղաքական հոտառութիւն, քաղաքական փորձառութեանց մէջ հմտացած կողմնացոյց մը չունինք, որ մեզի ճիշդ ճամբան ցոյց տայ։

Վերադառնանք Իրանի Իսլամական պետութեան ու փորձենք հասկնալ թէ կրօնականներով ղեկավարուող այս երկիրը ի՞նչ տեղ ունի ներկայ քաղաքական քարտէսին վրայ։

Մենք յաճախ կը քննադատենք այս կամ այն երկիրը իր ծաւալապաշտական նկրտումներու համար ու կ՚անտեսենք Իրանը, որ պակաս ծաւալապաշտական չէ։

1978-ին պայթած իրանեան յեղաշրջումէն ետք Շիա իսլամ կրօնապետներ սկսան ղեկավարել երկիրը, որ շահ Ռիզա Փահլաւիի իշխանութեան տարիներուն թագաւորական վերնախաւին հարուստ ու զեխ կենսամակարդակին կողքին, բաւական անտեսուած ու ճնշուած ժողովրդային խաւ մը ունէր։ Առաջին իսկ օրէն, իրանեան իշխանութիւնը իր գլխաւոր թշնամիները նկատեց ԱՄՆ եւ Իսրայէլը, ու շարունակուեցաւ յաջորդող տասնամեակներուն, յատկապէս, երբ Իրան ձեռնարկեց միջուկային տէրութիւն դառնալ՝ իր դիրքը զօրացնելու համար։ Աթոմակայանի նախապատրաստութիւնն ու Իրանի ազդեցութեան տարածումը երկրէն դուրս, մասնաւորաբար լիբանանեան Հզպոլլայի ստեղծումն ու զինումը Իսրայէլի քիթին տակ, պատճառ դարձան, որ Արեւմուտքը, յատկապէս ԱՄՆ-ը, պատժական միջոցներու դիմէ թէ՛ զինեալ հարուածներով, թէ՛ տնտեսական պատժամիջոցներով։

Կարծես Իրան կը վերադառնայ Պարսկական կայսրութեան, հոս ու հոն իր ձեռքը երկարելով, արաբական երկիրներուն մէջ Շիա համայնքին օգնութեան փութալու պատրուակով։ Լիբանանէն ետք վտանգաւոր ներկայութիւն ունեցաւ Սուրիոյ մէջ, պաշտպանելով օրինական իշխանութիւնը ռուսերու կողքին։ Ապա՝ Իրաքի մէջ, Եմէնի մէջ, Պահրէյնի մէջ... Եւ ուր որ մտաւ, հովանաւորեց ու զինեց ընդդիմադրութիւնները, տակնուվրայ ըրաւ ու ներքին եւ արտաքին առճակատումներ ու պատերազմներու պատճառ դարձաւ։

Որքան ալ որ իր եւ իր ժողովուրդին կարծիքով արդարանալի է Իրանի աս քաղաքականութիւնը, տարածաշրջանին մէջ խաղաղութիւն կը հաստատուի միայն եթէ Իրան քաշուի Լիբանանէն, Սուրիայէն, Իրաքէն, Եմէնէն եւ այլ վայրերէ։ Բայց ո՞վ խաղաղութիւն կ՚ուզէ. ժողովուրդը՝ այո՛, մեծ պետութիւնները՝ ո՛չ, խաղաղութիւնը փոր չի կշտացներ, կռիւ ու պատերազմ ըլլալու է ամէն կողմ, որ համաշխարհային «պիզնէսը» կանգ չ՚առնէ։

# Երկնքի լույսն առատ, մեր երկիրը՝ մթում

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ



Այսօր կաթոլիկ աշխարհի համար ամենանվիրական տոնն է՝ Սուրբ Ծնունդը, որ տարիներ ի վեր Գերմանիայում բնակվելով, ինձ համար էլ դարձել է սպասման, ուրախության, ներսս սուզվելու, քննելու սովորույթի մաս։ Տարիներ ի վեր հենց այս օրերին առավոտս սկսվում է Բախի Weihnachtsoratorium-ը՝ «Ծննդյան օրատորիան» ունկնդրելով։ Հոգեւոր երկար դասդասման ճանապարհ է, մինչեւ հունվարի 5-ի ճրագալույց, որ ստիպում է ավելի շատ սիրել, ներել, գթասիրտ ու մեծահոգի լինել, հոգում կուտակված հույզերի տիղմը դուրս նետել։ Հիսուսի ծնունդը տարբեր կերպ են դիմավորում մարդիկ, աշխարհիկացող մեր աշխարհում մի մասը չի հավատում, բայց տոնին սպասում է, մյուս՝ հավատացյալ մասը՝ նրան որոնում է իր ներսում եւ... դիմացինի մեջ։

Որոնում է խռոված հոգիների, տկար մարմինների, սփոփանքի կարոտ սրտերի մեջ, զգվանք չտեսած ուսերին փարվելով, դիմացինի տրտում աչքերի մեջ ուրախության շող նկատելով, այդպես հագեցնում է հոգին։

Հիմա Հայաստանում եմ՝ վիրավոր ու արնաքամ, անպահով ու բզկտված իմ երկրում, ուր Հիսուսն ամեն օր է ծնվում- մեռնում՝ հերոսացման ու դավաճանության հերթագայությամբ։

Սա թերթի տարեվերջյան համարն է, ուստի ներելի է, եթե Բախ ունկնդրելով, մի քիչ շեղվեմ՝ 2020-ի թողած հետքը, վերքը, վիհը, սպին խոշորացնեմ։ Նախ՝ վիրուսը տակնուվրա արեց մեր օրը, մեր դուրսն ու ներսը, եւ մենք շատ արագ յուրացրեցինք նոր կանոնը, որ դիմացինին փրկելու համար նրանից հեռու պիտի լինենք՝ տարածություն պահենք՝ ի սեր միմյանց։ Հասկացանք՝ որքան փխրուն, անպաշտպան է մարդը, որքան մենակ ու մեկուսի կարող է լինել կյանքը, որքան քիչ բան է պետք երջանիկ լինելու համար՝ ընդամենը առողջություն։ Հետո մեր տուն, մեր մեծ Հայաստան աշխարհ մտավ պատերազմը՝ սեւ, դառը, ծանր բոթն առօրյա դարձնելով։ Սուգը կիսեց մեր օրը, ճշմարտությունը փորեց մեր ներսը, իսկ որեւէ բառարանում չամփոփվող, մտագարությունից ծնված անեծքն ու հայհոյանքը դժոխքի դռանն է մերձեցնում մեր ապագան։ Այն ապագան, որ երազում էի, էլ չի գալու, քանզի այն ստեղծող անհատը՝ հայրենիքն ու պետությունն ամեն ինչից վեր դասող մարդը, մարդիկ գրկել են Եռաբլուրը։ Նա, նրանք տարբեր դպրոցների աշակերտներ են եղել, 2020-ին՝ նրանց մի մասը զինվորական ծառայության ժամանակ են դեմառդեմ նայել մահվան աչքերին, մյուս մասը՝ տարբեր բուհերի զորացրված ուսանողներ են, որ սեպտեմբերի 27-ին, պատերազմի լուրն առնելով, կամավոր ճակատ են մեկնել՝ պարտքի վեհ գիտակցմամբ։ Հայաստանի Հանրապետությունը մի երկարանուն նախարարություն ունի՝ ԿԳՄՍ, ձայն լսվե՞լ է աշակերտ, ուսանող տնօրինող այդ կառույցից, գրավոր մի սրտառուչ տող շարադրե՞լ է այդ կառույցն այս օրերին։ Նախարարությունը վարժվել է սոցիալական հեռավորությունը պահպանել, բայց տեղյա՞կ է, որ կարող է երբեմն խախտել օրենք ու կարգ, երբ դա նույնիսկ երկինքն է հուշում։

Դեկտեմբերի 21-ին երկու մեծ մոլորակները՝ 730 միլիոն կիլոմետր հեռավորությամբ Յուպիտերն ու Սատուրնը իրար մերձեցան։ Գիտնականներն ասում են, թե այս ֆենոմենը Երկրից կարելի է դիտել մինչեւ դեկտեմբերի 25-ը։ Երկիր մոլորակից այնպես է թվում, թե նրանք իրար փարվել են ձգտում։ Ասում են՝ 20 տարին մեկ այս մոլորակները կարոտում են իրար, մերձենում են, բայց այսչափ մոտ եղել են մեկ էլ 1225 թվականի մարտի 4-ին։ Երկնքում այս զգվանքից լույսն առատ, առատ է, մենք էլ մեր լույսն ենք կուտակել վերում՝ Եռաբլուրի մեր մեծ կանթեղը Բեթղեհեմի աստղն ավելի պայծառ է դարձրել, հսկում է երեք մոգերին՝ Գասպարին, Մելքոնին եւ Բաղդասարին, որ ընծաներն առած՝ հունվարի 6-ին Հիսուսի մսուրքն են հասնելու։ Երկնային այդ լույսը թող ցրի բոլոր անհետ կորածների ճանապարհի մշուշը, թող տուն դարձնի բոլոր գերյալներին, թող երկնային զգվանքը մոլորակների՝ երկրում պատճենվի՝ մայր ու որդի, հայր ու զավակ, կին ու տղամարդ գրկեն իրար։

Եղիցի սեր, գթություն, հույս։ Եղիցի լույս՝ մեծ, պայծառ Քրիստոսի լույսը։

Եղիցի, միշտ եղիցի մեր Հայաստան աշխարհը՝ Աստծո ողորմածությամբ, մեր նորոգ հույս ու հավատով, մեր շինարար ոգով, սահմաններն անառիկ պահելու կամքով։

Շնորհավոր Նոր տարի եւ սուրբ Ծնունդ։

# «Մղամուճ, մուսակկա եւ մարդասպանություն»

Բաղաձայնույթի՝ որոշակի գեղարվեստական հնարք հետապնդող «Մ» բաղաձայնի կրկնությամբ (հետաքրքրական է, որ անգլերեն վերնագիրն էլ պարունակում է միեւնույն տառի կրկնությունը՝ «Mistletoe, Moussaka and Murder») վերնշյալ բուսա-բանջարեղենա-առեղծվածային խորագիրն է ընտրել իր նոր գրքի համար Ջերսի Շորում ապրող (որտեղ ծնողները ռեստորանի սեփականատեր են) նախկինում իրավաբան աշխատած, իսկ այժմ Քենսինգտոն հրատարակչատան լույս ընծայած «Խոհանոցային առեղծվածներ» մատենաշարի հեղինակ **Թինա Քաշյանը**։ Նրա առեղծվածային պատմություններն ունեն ինքնարտահայտիչ համ ու հոտով, սրամիտ վերնագրեր, ինչպես օրինակ՝ «Հումուս եւ սպանություն», «Փախլավայի սիրողի մեջ դաշունահարված», «Մի ոտը գերեզմանում», «Գառան մսի վրայով», եւայլն։ Այս բոլորում հանդես է գալիս Քաշյանի նման նախկինում իրավաբան աշխատած, իսկ հետո ծովեզերյա այդ վայրում միջերկրականյան խոհանոցային ուտեստներ մատուցող ռեստորանատեր դարձած, բայց խուզարկուի ընդունակությունները դեռեւս պահպանած **Լյուսի Բերբերյանը**, որ նշանված է ռեստորանի ավագ խոհարար՝ Ազատի հետ։ Վերջինս կոտրել է նրա սիրտը։ Լյուսին պետք է կարողանա նաեւ լեզու գտնել իր՝ ուրիշի գործերին խառնվող ծնողների հետ։ Յուրահատուկ դեր է վստահված նաեւ «Կատու» անունով փիսիկին։





Թինա Քաշյան

«Մղամուճ, մուսակկա եւ մարդասպանություն» նոր գրքում օվկիանոսում լողալիս սպանվում է թոշակառու Սպուները։ Բոլորի կասկածներն ընկնում են հացթուխ Սյուզանի վրա, բայց խուզարկուների ներքին ձայնն ասում է, որ մեկ ուրիշն է մեղավորը։ Հանգուցալուծումը անսպասելիորեն գալիս է անակնկալ մատուցելու ընթերցողներին։

Քաշյանի գրելաոճը բնական խոսակցականն է եւ պարունակում է առօրյա կյանքի հետաքրքրական մանրամասնություններ։ Գիրքը (320 էջ) ըստ գրախոս **Քրիստոֆեր Ադամյանի**, խիստ հաճելի պահեր կպարգեւի թագավարակի պայմաններում ապրող ընթերցողներին, հատկապես նոր տարվա արձակուրդների ժամանակահատվածում։ Հ.Ծ.

# ...Երբ սուգն է անգամ անարգվում

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ



Հարց է առաջանում. ինչո՞ւ ենք հայտարարում սգո օր, եթե սուգը հարգել չգիտենք: Մինչեւ դեկտեմբերի 19-ը մենք գիտեինք, թե սուգը պահանջում է լռություն, կարծում էինք, թե այցելությունը ննջեցյալի շիրիմին հիշատակի խոնարհման ծես է: Այստեղ բառեր չեն ասվում, մեկ -երկուսը՝ կիսաձայնով, որովհետեւ սա մի խորհրդավոր վայր է, որտեղ այս եւ այնկողմնային աշխարհների սահմանները մոտենում են, շոշափելի են դառնում մետաֆիզիկական զգայնությունները, որ կամա - ակամա պարտադրում է վարքաբանության իր կանոնները:

Սա մենք գիտեինք մեր ապրած փորձով, սակայն եղավ մի օր, մի եղելություն, որ մեզ ցույց տվեց մեկ այլ բան՝ մարդու ոչնչացող էության ցնցոտիները. ու դա զազրելի էր:

Մեր արժեքների մեջ քանի տասնամյակ արդեն լուրջ տեղաշարժեր են գրանցվում նախապես մտածված՝ մարդուն մարդկայնությունից զրկելու ծրագրով. հետո մանիպուլացնելու համար հարկավոր է նրան նախ զրկել մտածելու - դատելու ունակությունից եւ, իհարկե, թողնել կիսաքաղց: Մասմեդիան բավարարից ավելին է լծված մարդկանց հիմարացնելու գործին, իսկ ներկայում մեզ խճճելու նպատակով ամեն երեւույթ ու իրողություն ներկայացվում է երկու հակադիր երեսով՝ սեւ ու սպիտակի. վկա՝ հիմա, գրելուս ընթացքում Սյունիքի ճանապարհին կատարվող իրադարձությունները. մի բեւեռում օղի են խմում զոհված մարդկանց շիրիմներին ողորմաթաս, ինչպես սովոր են ասել, մեկն էլ դիմում է վարչապետին արագաչափերի հետ կապված ինչ-որ տուգանքների խնդրանքով ու... մեկ էլ՝ թե դավաճան կլինես, որ հրաժարական տաս, իսկ մյուս կողմում մարդիկ ասում են, որ սյունեցիք վարչապետին ոչինչ չունեն ասելու. «Ի՞նչ հայացքով պիտի նայի 5000- ից ավելի ինձ նման ծնողների աչքերին ու ի՞նչ պատասխան պիտի տա: Ի՞նչ է ուզում տեսնել, երբ մենք երեխա ենք կորցրել եւ հիմա էլ ծառայության մեջ ենք: Երբ հայ ազգը կռվում է, դիրքավորվում է, ինչո՞ւ է այդ դիրքերը հանձնում. կորցրել ենք, էլ կորցնելու բան չկա, մնացել են մեր մասղաշ աղջիկներն ու մեր տնային տնտեսուհիները...»:

Սյունիքի ճանապարհին շատ բաներ եղան, բոլորն էլ տեսան ու գիտեն ինչն ինչոց է, բայց զարմանքներ էլ եղան՝ թե ինչպես է որդեկորույս մայրը զավակի շիրիմի մոտ գրեթե ծնկաչոք խոնարհվում՝ վարչապետին շնորհակալություն հայտնելու: Սա բնական հոգեվիճակի՞ արտահայտություն, թե՞ իրականության զգացողությունը կորցրածի պահվածք է: Սիսիանի եկեղեցու քահանայի՝ վարչապետին ձեռք չմեկնելու միջադեպը հակասական վերաբերմունքների տեղիք տվեց, միաժամանակ մոլի կռապաշտների մի խումբ առիթը բաց չթողեց ոչ միայն ամենաանվայելուչ խոսքերով եկեղեցու սպասավորին քննադատելու, նաեւ նսեմացնելու Հայ եկեղեցու դերը մեր պատմության մեջ՝ իբր վկայաբերելով պատմական որոշ դրվագներ, իսկ ամենակարեւորը՝ ոչ ստույգ տեղեկություններով:

Աշխարհակարգի փոփոխմանը լծված նոր ուժերը ֆինանսական, տնտեսական կառավարման նոր կարգերին անցնելուց առաջ հող պիտի նախապատրաստեին՝ զանգվածների մտածողությունը փոխելու, որն իր հերթին վարքագիծ կփոխեր, եւ իհարկե, արժեքների մեջ փոփոխություն կատարելը պարտադիր պայման է: Կախված թե ինչպիսի հասարակարգ, սոցիում են ուզում ձեւավորել, ձեւակերպվում են համապատասխան արժեքային համակարգեր: Անքննելի ճշմարտություն է՝ ինչ արժեք կրում ես, այդպես էլ մտածում, գործում, ապրում ես: Նախորդ տասնամյակներն այս առումով պարարտ հող ստեղծել էին, եւ հիմնական խնդիրը կոռուպցիան ու թալանը չէր, դա ավելի երեւացող կողմն է, որի դեմ ծառացել էին ամբոխախեղդ հրապարակները: Բուն չարիքը մարդուն բարոյազրկելու մեջ էր՝ ստեղծելու բարոյազուրկների հասարակություն, որովհետեւ բարոյազուրկը չունի հայրենիք, չունի պատմություն, նա չունի անգամ երազանք, միակ պաշտամունքից՝ փողից բացի, ո՜ւր մնաց՝ իդեալ ու սրբություն: Սա մի ժամանակաշրջանն է, ուր ոտքի տակ է գնում ամեն սրբություն, լուսավոր ամեն բան. Աստվածային օրենքների, բարոյականության հակոտնյան ու թշնամին է սա:

Տգիտություն տարածելուն, նյութի համատարած պաշտամունքին զուգահեռ ակտիվացան ամեն տեսակ մութ ու վայրի բնազդները, սեփական էգոյին հագուրդ տալու սահմանները լայնարձակվեցին ի պոռոտախոսություն ու մեծամտություն, բնականաբար կրթության չափանիշը հասավ այն աստիճանի, որ կիսատ-պռատ մեկ գիրք կարդացողը դաս տա, ասենք, ակադեմիական լուրջ կրթությամբ ու հարգելի վաստակով հասարակության մի շերտի, կամ պարտականության պես ամենօրյա կիսագրագետ ստատուս գրողն իրեն համարի ոչ ավել, ոչ պակաս ազգափրկիչ կամ թե փիլիսոփա: Սոցցանցերը պատահական չհորինվեցին, երբ մասմեդիան իր դեմքը պարզեց, հայտնվեցին ավելի վտանգավոր, քաոսածին սոցիալական տեղեկատվական այս համակարգերը, որոնք արդեն վերածվում են աղետի: Նման մթնոլորտում ապրող, այսպիսի չափանիշներով ուղղորդվող հասարակությունները, որի համակեցության հարաբերություններից վտարված են կարեւոր արժեքները՝ կարեկցանքը, սրտացավությունն ու հանդուրժողականությունը, վտանգավոր են դառնում մնացածների համար: Էքստրեմալ վիճակներում սրանք բացահայտում են իրենց ողջ բովանդակությունը՝ լավ ու վատ կողմերով: Մոտ երկու ամիս առաջ հպարտությունից ճաք էինք տալիս, թե ինչպիսի զոհողությունների ենք գնում, թե թիկունքում ինչ անձնազոհ աշխատանքներ ենք տանում. տանողները տանում էին իհարկե, եւ թե ինչ համախմբված էինք եւ աչք էինք փակում շատ բաների, անգամ ամենազազրելի երեւույթների դեմ, երբ եղան մարդիկ՝ ասացին, որ արտերկրից տոննաներով ուղարկված բանակին, զինվորին անհրաժեշտ ապրանքը տեղ չի հասնում, որ գողանում են, եւ որ անհատական, հասցեական ուղարկեն: Ամեն տեղից, ամեն ինչ գողանալու այս մարմաջը արմատացած սովորություն է դեռ սովետական ժամանակներից, եւ հասարակության վերեւի շերտը չէ միայն արատավորված սրանով, այլեւ յուրաքանչյուր՝ մինչեւ ամենացածր օղակների մանր-մունր աշխատողներ: Եվ որքան մեծ՝ գողոնի արժեքը, այնքան պատիվը՝ բարձր, քանի որ այս հասարակության արժեքային կենտրոնը փողն է:

Ահավասիկ այսօրերի դրսեւորումները՝ ջնջվում են սահմաններ, ստեղծվում են աննորմալ նորմեր, վերանում է ամոթ ու պատկառանք, ոչնչացվում են գաղափարներ, խորհրդանիշներ, ծաղրվում է զգացմունք ու հույզ, վիշտն ու ուրախությունը դառնում է միեւնույն:

Հարցը օդում մնա թող առկախ. դուք ինչո՞ւ էիք գնում Եռաբլուր, երբ այնտեղ սուրբ լռություն էր, այնտեղ շիրիմները դեռ տաք էին, հողը՝ աղիացած արցունքներից. այնտեղ ձեզ ոչ ոք չէր սպասում, ձեր լկտի աղմուկով իրավունք չունեիք պղծելու այս անմաքուր աշխարհից հեռացած ու դեռ չհանգրվանած, դեռ ճանապարհին գտնվող հոգիների հանգիստը: Այն ի՜նչ բարբարոսություն, ի՜նչ վայնասուն էր, որ դրիք այդ սուրբ վայրում...

Դեկտեմբերի 19-ին Եռաբլուրում կատարվածը համազգային ամոթն էր մեր, մեր հասարակության մի լայն հատվածի հայելային անդրադարձը, պատերազմի պարտության պատճառը՝ լկտի անբարոյականության, երբ չկա չափանիշ ու չկա սանձում անկարգ կրքերի, երբ սուգն անգամ անարգվում է, ու դա խարան է, ու դա պատերազմի պարտությունից ավելի ցավոտ ու ավելի նվաստացնող էր: Այս տասնամյակներում դաստիարակվածների ամբոխն էր հիստերիկ ճղճղոցներով, հայհոյողների, անիծողների ու սուլողների, եւ ինչ հեգնանք՝ եկեղեցու շուրջ հավաքված, թավշյա խաղերի ու քարոզչության պտուղ երկու բանակները՝ իբր սեւ - սպիտակի, անծանոթ մարդկանց վրա՝ ինչ է, թե այլ կարծիք ունեն, աներեւակայելի նողկալի հայհոյանքներ տեղացող մութ զանգվածը: Կռապաշտների այս խումբը պիտի մեր կյանքն ուղղորդի՞, չափանիշներ դնի՞, նորմեր սահմանի՞, ճաշակ ձեւավորի՞: Կարծես հատուկ էր արված ցուցանելու՝ մի հին ժողովրդի, որ հին մշակույթ ու գիր ունի, բայց արժեքը չգիտի ու չի գնահատում ու դեռ հանդգնում է իրեն ինչ-որ արիական գենի ժառանգորդը համարելու, պարապ տեղը մեծամտանալու՝ ամեն ինչի սկիզբը իրեն համարելով, անգամ Հիսուս Նազովրեցուն հայ համարելու, որ այնուամենայնիվ, քրիստոնեությունն առաջինն ընդունած երկիր ու ժողովուրդ է, բայց այդպես էլ քրիստոնեական վարդապետությունից ոչինչ չհասկացավ, մնաց անգետ ու անհաղորդ Քրիստոնեության Ոգուն:

Սակայն մի փոքր անկյուն, մի շատ նեղ անկյուն Աստված գուրգուրանքով դեռ պահել է խիղճ ու բարոյականություն պահպանող, Պատվին ու Արժանապատվությանը երդում տված հայերի համար: Նրանք մեր կողքին են դեռ...

*Հ. Գ.- Հաջորդ առավոտյան ձյուն եկավ: Եռաբլուրում ննջողների շիրիմները բնությունն ինքը պաշտպանեց... ծածկեց ճերմակով: Լռություն իջավ, սուգն իր տեղում իր կանոնների մեջ մտավ:*

*Նախորդ օրվա բարբարոսության դեմ պատնեշ եղավ ձյունը, սահմանագիծ՝ սրբացած հողի ու մարդկային ապականության միջեւ...*

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

# Արաքսի հովտից՝ Վարդենիս

Մեր կրած դաժան պարտության սերմերը վաղուց էին հողը նետվել: Հիմա, երբ պարտվել ենք, երբ կորցրել ենք մեր հայրենիքի մի հատվածը, բոլորը մեղավորներ են փնտրում՝ առանց հայելու մեջ նայելու, առանց հասկանալու, որ նախկինում հաճախ արտաբերած բառերից ու նախադասություններից շատերն էլ մեզ տարան պարտության, օրինակ՝ «հայաստանցի-ղարաբաղցի» բառակապակցությունը:

«Հայաստանցի-ղարաբաղցի» ազգակործան թեզը քանդեց մեր տունը, ճիշտ է, վերջին շրջանում ինքներս մեզ հույս էինք տալիս՝ մտածելով, թե վերացել է, բայց, ոչ, ընդհակառակը, խորացել էր, խորացրել էր նա, ով պատեհ-անպատեհ գործածում էր «ղարաբաղյան կլան» բառակապակցությունը: Այդ թեզը մի պահ արմատավորվեց այնքան, որ Արցախի հանդեպ հայկական սերը զիջեց ադրբեջանականին: Նրանց զրույցները Շուշին «ազատագրելու» մասին էին, մերը՝ ղարաբաղցի մի միֆական կերպարի, որն, իբր, ջուր չի տվել ծարավ զինվորին: Ապուշություն:

Այդ միֆը տարածողներն այսօր «քնքուշ ադրբեջանցու» կերպար կերտող ապազգայինների հայրերն էին, հորեղբայրներն ու գաղափարական որդեգիրները: Այսօր էլ, երբ պայքարի այս փուլը տանուլ ենք տվել, արագ տեմպերով ու մեծ ներուժի ծախսերով կրկին հրապարակ են նետվել «հայաստանցի-ղարաբաղցի», «հայ-ադրբեջանական համակեցություն», «հանդուրժող ադրբեջանցիներ» կարգախոսները... Ամենասարսափելին այն է, որ մեր համազգային նվաստագրից հազիվ անցել է մեկ ամիս, բայց կրկին տուրք են տալիս այն ամենին, ինչը հանգեցրել է հիշյալ նվաստագրին:

Մարդիկ գովաբանում-փառաբանում են նվաստագիր ստորագրած ղեկավարին, նրան՝ ով իր մեխանիկի քաղաքագիտությամբ ու ավտոտնակային քաղաքականությամբ հաղթանած բանակին պարտվողի բաճկոն հագցրեց, նրան՝ ով մեր վանքերն ու եկեղեցիները հանձնեց թշնամուն, նրան՝ ով Շուշին տվեց թշնամուն, եւ վերջապես նրան՝ ով դավադրաբար, գրչի մեկ հարվածով Նախիջեւանը Զանգեզուրով կապեց մայրցամաքային Ադրբեջանին՝ ազդարարելով Մեծ Թուրանի երազանքի արարներից մեկի ավարտը:

Մենք սխալներ չենք քաղում անցյալից: Այդպես էլ չսովորեցինք, որ տվողից ուզում են, այդպես էլ չսովորեցինք, որ խնդրելով ձեռք չեն բերում՝ ողորմություն են ստանում, որ թուրքին «մի կտոր» հող զիջելով ընդարձակ հայրենիք ես կորցնում՝ խախաղ ապրելու երաշխիքն ավելի կորցնելով: Մենք չսովորեցինք, որ դավաճանին ներել չի կարելի, մենք չսովորեցինք, որ դավաճանը չպետք է տեղ ունենա մեր երկրում:

Մանավանդ այնպիսի դավաճանները, որոնք մեր հայրենիքն անվանում են գրավյալ տարածքներ ու «ադրբեջանական հողեր, յոթ շրջաններ»: Հենց այդ դավաճաններն են հուսահատությունն ու հոգեկան անբարոյականությունը սերմանել մեր հասարակության ներսում, նրանք են հայերին հասցրել մի կետի, որտեղից ոմանք հրաժարվեցին իրենց ծնողներին թշնամուց պաշտպանել Արաքսի հովտում ու Ամուրի կատարներին: Այդ մարդիկ նույն բանն այսօր անում են իրենց տների մոտ՝ Վարդենիսում ու Գորիսում:

Չէ, մենք՝ դավաճանվածներս, դասեր չենք քաղում: Եւ, այո, տեղի ունեցածի մեջ ամենամեծ մեղքը հենց մերն է, չէ՞ որ մենք իշխանության բերեցինք ապիկարին, չէ, որ մենք երեխայի պես երես տվեցինք նրան, չէ՞ որ մենք աչք փակեցինք նրա ամեն մի ապազգային գործարքի վրա՝ հույս ունենալով, որ կուղղվի, չէ՞ որ... մեր միջից է դուրս եկել նա: Մենք եմ ասում, որովհետեւ սրա մեջ է ամբողջ ճշմարտությունը:

Մենք պարտվեցինք, որովհետեւ կորցրել էինք «մենք»-ի զգացումը՝ թե՛ վայելելու, թե՛ պատասխանատվություն կրելու ժամանակ: Եւ մենք կարող ենք հաղթել միայն մեկ դեպքում, երբ վերագտնենք ու վերապրեցնենք «մենք»-ի զգացումը՝ վայելելու եւ պատասխանատվություն կրելու ժամանակ:

# Հրաժեշտ մղձավանջային տարուն

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

*Դետրոյթ, ԱՄՆ*

Եթե հնարավոր լինէր, մեծ թվով մարդիկ պիտի ցանկանային 2020 թվականը հանել օրացույցից եւ ջնջել այն ընդմիշտ պատմության ժամանակագրությունից: Տարին ահավոր չափերի ցավ, դժբախտություն ու տառապանք պատճառեց երկրագնդի ժողովուրդներին: Հայաստանն ու հայերը ոչ միայն այդ համընդհանուր ցավին բաժնեկից դարձան, այլեւ տառապանքի հավելյալ բաժինն էլ ստիպված եղան ապրել:

Համավարակները սովորաբար տեղի են ունենում մոտավորապես ամեն հարյուր տարին մեկ: Այնպես որ մեր սերնդին էր բախտ վիճակվել ականատես լինել պատմության գրքերում կարդացած սարսափներին:

Համավարակի դեպքեր արձանագրվել են դեռեւս 14-րդ դարում, երբ աշխարհի բնակչությանն սպառնում էր «Սեւ մահ» կոչված այտուռուցային ժանտախտը (bubonic plague), որ խլեց 50 միլիոն մարդու կյանքը:

Պատմության վաղ ժամանակներում, համավարակները սպառնում էին որոշակի շրջանի բնակչությանը, եւ չէին տարածվում երկրագնդի այլ շրջանները, որովհետեւ մարդիկ նստակյաց կյանք էին վարում եւ որոշակի տարածքից այն կողմ ճանապարհորդելու իրենց հնարավորությունները խիստ սահմանափակ էին:

Մարդաբաններն ու պատմաբանները, օրինակ, չեն կարողացել ճշգրտորեն պատճառաբանել Մեքսիկայում Մայա բնակչության ոչնչացումը: Որպես հավանական պատճառներ նշվել են ջրի, ջրապաշարների սակավությունը, գերբնակեցումը եւ պատերազմները, բայց կարող էր նաեւ ոչնչացումը լինել տեղայնացված համաճարակի պատճառով, որ Մայաները չէին կարողացել հաղթահարել:

Տասնչորսերորդ դարում Սեւ մահվան գլոբալ հետեւանքները վերագրվում են Միջին Արեւելքի տարածքով Չինաստանից Եվրոպա ձգվող Մետաքսի ճանապարհի գործողություններին: Այդ ժամանակ դրանք ամենաաշխույժ առեւտրաշրջանառության միջոցներն էին, որոնք մարդկանց եւ ապրանքներին հնարավորություն էին տալիս երկար ճանապարհորդություն կատարել եւ հիվանդությունը տեղափոխել մի վայրից մյուսը:

Իսպանական գրիպը, որ վարակեց աշխարհը 1918-1920 թվերին, վստահաբար մարդկանց տեղաշարժի պատճառով էր սրվել: Հաղորդվում է, որ դրանով վարակվել էր 500,000,000 մարդ, որոնցից մահացել էր 50 միլիոնը: Մ. Նահանգներում գրանցվել էր 675 հազար մահվան դեպք:

Գերարագ ճանապարհորդությունների մեր ժամանակներում թագավարակը (covid-19) վեց ամսից էլ պակաս ժամանակահատվածում տարածվեց ամբողջ աշխարհով մեկ եւ պատճառ դարձավ 1.6 միլիոն մարդկանց մահվան, որոնցից ավելի քան 300 հազարը Մ. Նահանգներում: Վարակի տարածումն իր հետ բերեց ոչ միայն մահ, այլեւ վախ եւ շփոթվածություն, որովհետեւ ոչ մի բուժում կամ դեղամիջոց չկար դրա առաջքն առնելու համար: Միայն մեկուսացումը կիրառվեց որպես կանխարգելման միջոց: Հանձնարարվեց կրել դիմակներ, պահպանել սոցիալական հեռավորություն եւ հաճախակի լվանալ ձեռքերը: Այս միջոցներն էլ քաղաքականացվեցին:

Նախագահ Դոնալդ Թրամփը ձեռնոց նետեց հանձնարարված այդ միջոցներին եւ դա շուտով քաղաքական դիրքորոշման բնույթ կրեց: Ենթադրվում է, որ նախագահական այդ միջոցներն անտեսվեցին, որպեսզի գործարարությունն ու տնտեսությունն ընդհանրապես չտուժեն, եւ մարդիկ ձեռք բերեն պաշտպան իմունիտետ: Հազարավոր ընտանիքների կյանքը խորտակելուց հետո, կարծես թե համավարակի թափը կոտրվել է շնորհիվ այն պատվաստումների, որոնք վերջերս թույլատրվեցին օգտագործել:

Շատ երկրներ ձեռնամուխ եղան պատվաստանյութերի ձեռք բերմանը: Առաջինը «Pfizer» եւ «BioNTech» ընկերությունները արտադրեցին միասնաբար: Մի քանի օր առաջ Սննդի եւ դեղերի վարչությունը (FDA) հաստատեց նաեւ «Moderna» ընկերության պատվաստանյութը:

Չնայած գիտնականները պնդում են, որ երկու պատվաստանյութերն էլ համազոր են, ես երկրորդին եմ ավելի վստահում՝ հենվելով ազգային հպարտության վրա, քանի որ մեր հայրենակից դոկտ. Նուբար Աֆեյանն է գլխավորում «Moderna» ընկերությունը:

Թագավարակից բացի, Մ. Նահանգները 2020-ին մեկ այլ փորձառություն էլ ձեռք բերեց՝ ականատես լինելով նախագահական ընտրության ներկայացմանը:

Սովորաբար ընտրություններում իշխող նախագահն է հաղթում եւ վերընտրվում: Նախագահ Թրամփի իշխանության օրոք, երկիրն այնքան էր բեւեռացված, որ ռեկորդային թվով քվեարկողներ մասնակցեցին ընտրություններին, եւ ճշմարտության դեմ մեղանչած կլինենք, եթե նշենք, որ Թրամփը ժողովրդականություն չէր վայելում: Ընդհակառակը, աննախադեպ նվիրվածությամբ 74 միլիոն քաղաքացիներ վստահում էին նրան եւ քվեարկեցին նրա օգտին: Բայց նշված բեւեռվածության մթնոլորտում ընդդիմադիր կողմը ստացավ առավել ռեկորդային թվով՝ 81 միլիոն քվեն: Թրամփը դեռ պետք է հաշտվի իր պարտության հետ եւ շնորհավորի նորընտիր նախագահ Ջոզեֆ Բայդենին, բայց հարցն այն է, որ նա չի հավատում, որ պարտված է: Դրամատիկական իրադարձություններ սպասվում են մինչեւ հունվարի 20-ի երդմնակալության օրը եւ գուցե նաեւ դրանից հետո:

Գալով Հայաստանին, պետք է նշել, որ առողջապահության համակարգը գերծանրաբեռնված էր եւ գտնվում էր փլուզման եզրին՝ մոլեգնած համավարակի հետեւանքով: Կացությունը է՛լ ավելի բարդացավ ղարաբաղյան պատերազմի անփառունակ ավարտի պատճառով: Տասը հազար վիրավոր զինվորներ գտնվում են հիվանդանոցներում: Հինգ հազարից ավելի զինվորներ զոհվեցին պատերազմի ընթացքում: Իրավիճակը քաոսային է, անորոշ: Մեծ եղեռնից հետո սա, երեւի թե, Հայաստանին պատուհասած ամենավատ աղետն էր, քանի որ կյանքերի կորստին գումարվեց նաեւ տարածքների կորուստը: Բայց ինչքան էլ ահավոր լինեն կորուստները, դրանք խամրում են այն անորոշ ապագայի հեռանկարի առաջ, որ սպասում է Հայաստանին:

Հայաստանը մահացու կերպով վիրավորվեց՝ մինչ Ռուսաստանն ու Թուրքիան իրենց հաշիվներն էին մաքրում: Փորձագետներից շատերը թերագնահատել էին Թուրքիայի պան-թուրանական նկրտումները, բայց հանկարծ գիտակցեցին, որ թուրքական զորքերը Հայաստանի սահմաններին են՝ պահանջելով Հայաստանի տարածքով միջանցք ձեռք բերել դեպի Նախիջեւանի ադրբեջանական էքսկլավը:

Առաջացած քաոսային վիճակը չափազանց մեծ մարտահրավեր է, որպեսզի Փաշինյանի վարչակազմը կարողանա դիմակայել: Անորոշությունը, թունոտ բանավեճերն ու արհամարհական վերաբերմունքը միմյանց նկատմամբ փոխզիջման գնալու ոչ մի հնարավորություն չեն թողել: Հայաստանի քաղաքական այս քաոսային վիճակը ծիծաղի առարկա է դարձել Բաքվի եւ Անկարայի ղեկավարների շրջանում:

Ընդդիմությունը դավադիր է պիտակավորել վարչապետ Նիկոլ Փաշինյանին: Բայց նա հաստատ դավաճան չէ: Նա հայրենասեր է, բայց անձեռնհաս առաջնորդ: Նրա թավշյա հեղափոխությունը չկարողացավ իրականացնել իր խոստումներն ու նպատակները: Իհարկե անվերահսկելի համաճարակը տնտեսական փլուզման պատճառ դարձավ, բայց անկախ համավարակից, Փաշինյանի թիմը ողորմելիորեն ձախողվեց դիվանագիտության եւ covid-ին նախորդած ժամանակահատվածում տնտեսությունը բարելավելու ասպարեզներում: Օլիգարխներից ապօրինաբար ձեռք բերված հարստությունը պետությանը վերադարձնելու անխոհեմ մոլուցքով տարված՝ նա դրդեց ձեռնարկատերերին, որ երկիրը թողնեն ու հեռանան՝ տանելով իրենց հետ իրենց ամբողջ կապիտալը, մինչ մյուս կողմից չկարողացավ արտասահմանից նոր ներդրումների համար ստեղծել բարենպաստ պայմաններ:

«Բարգավաճ Հայաստան» եւ «Լուսավոր Հայաստան» խորհրդարանական ընդդիմադիր կուսակցությունները անկարող են որեւէ քաղաքական հզոր ուժ ներկայացնելու: Իսկ տասնյոթ կուսակցությունները, որոնք խորհրդարանում ներկայացված չեն, ընդդիմադիր մի շարժում են ձեռնարկել նախկին վարչապետ Վազգեն Մանուկյանի գլխավորությամբ: Բայց այդ շարժման ետեւում կանգնած նախկին վարչակազմի ստվերը վախեցնում է քվեարկողներից շատերին:

Եթե Փաշինյանը ինչ-որ բան կարողացել է անել արդյունավետ կերպով, դա նախկին վարչակազմի ներկայացուցիչներին սեւացնելն է եւ հասարակությունը բեւեռայնացնելը:




Հայաստանի բնակչությունն այժմ իր վերքերն ամոքելու հոգսերով է տարված: Շփոթվածության իրավիճակն ակներեւ է ամենուրեք: Շատ շատերն են պահանջում Փաշինյանի հրաժարականը առանց սակայն մատնանշելու մի այլ մրցունակ թեկնածուի անունը:

Նախագահ Արմեն Սարգսյանը նույնպես կոչ է անում, որ Փաշինյանը հրաժարվի իր պաշտոնից, հույս ունենալով, որ ինքը կկարողանա երկիրն առաջնորդել անցումային ժամանակաշրջանում՝ տեխնոգրադների օժանդակությամբ, բայց նրա կոչն առայժմ պատշաճ ուշադրության չի արժանացել:

Համավարակի գուցե միակ դրական կողմն այն է, որ կանգնեցրել է արտագաղթը: Բայց հենց վարակն անհետանա, Հայաստանից մեկնողների թիվն ավելանալու է՝ իսկական վտանգ սպառնալով հայրենիքին:

Նոր Տարվա եւ Սբ. Ծննդյան տոներն ավանդաբար եղել են ուրախության եւ հանդիսությունների ժամանակաշրջան: Բայց այս անգամ Հայաստանում եւ աշխարհով մեկ այդ տոները մենք դիմավորելու ենք հուսաբեկության եւ վշտի պայմաններում: Դեկտեմբերի 31-ին մենք դիմավորելու ենք նոր՝ 2021 տարվա մուտքը: Դա լինելու է առիթ վերջնականապես հրաժեշտ տալու 2020-ի մղձավանջային տարուն եւ հույսեր փայփայելու, որ նոր տարին լինելու է շատ ավելի բարվոք:

**Անգլ. թարգմ.**
**ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**
**(The Arm. Mirror-Spectator)**

# 93 հազար դոլարով վաճառվել է 17-րդ դարի հայկական ձեռագիր ավետարան



**Դեկտեմբերի 3-ին լոնդոնյան հանրահայտ Sotheby's աճուրդի սրահում 69.300 ֆունտ ստերլինգով (մոտ 93.000 դոլար) վաճառվել է վաղ 17-րդ դարի հայկական նկարազարդ ձեռագիր ավետարան, տեղեկացնում է «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթը:**

**Հորթի կաշվից պատրաստված եւ զարդանկարներով դրոշմատպված կազմով գրքի նախնական գինը տատանվել էլ 7-10 հազար ֆունտ ստերլինգի միջեւ: Ենթադրվում է, որ 197 էջանոց մատյանը (147x100 մմ) պատրաստվել է Միջագետքի հինավուրց քաղաք Ամիդում (այժմյան Դիյարբեքիրի վիլայեթում) եւ ըստ աճուրդի կենտրոն-սրահի կայքում տեղադրված նկարագրության՝ նշանակալիորեն նման է Բալտիմորի Ուոլտերս արվեստի պատկերասրահում (Walters Art Gallery) պահվող ձեռագրին, որն Ամիդի գրչատանը 17-դ դարի սկզբներին պատրաստել է գրիչ Մելքոնը եւ նկարազարդել է Հովհաննեսը:**

**Գիրք-մատյանի յուրաքանչյուր բաժնի սկզբում կարելի է տեսնել մի ավետարանիչի մանրանկարը, իսկ հանդիպակաց էջում 27 տողերի վրա երկու սյունակներով գրավոր տեքստը՝ ոսկեզօծ օրնիթոմորֆիկ տառերով եւ բոլորգիր գլխազարդերով: Կան նաեւ բազմաթիվ լուսանցազարդեր:**

**Հ.Ծ.**

ՄԱՆՈՒԿ ԱՐԱՄՅԱՆ

# Թանկացումներ, դրամի արժեզրկում եւ ավանդների «փախուստ» բանկերից

Արցախյան պատերազմի հետեւանքով ցավալի հետեւանքները դեռ երկար են մեզ ուղեկցելու։ Բացի տարածքային եւ մարդկային ծանր կորուստներից, Հայաստանի անվտանգությանը սպառնացող նոր վտանգներից, մենք ավելի խորը ընկղմվեցինք տնտեսական ճգնաժամի մեջ։ Առանց այդ էլ, անցած երկու տարիների ընթացքում երկրի իշխանությունը զավթած խմբակի արկածախնդրությունների հետեւանքով նախ՝ սկսեց նվազել մինչ այդ սկսված բարձր տնտեսական աճի տեմպը, ապա՝ դրան հաջորդեց տնտեսական անկումը։ Կորոնավիրուսն ու պատերազմը միայն ավելի ակնառու դարձրեցին իշխանության ապիկար կառավարման հետեւանքները, որոնց մեր տնտեսությունը բախվեց ավելի թուլացած։ Արդեն այս՝ դեկտեմբեր ամսվա սկզբից տնտեսական անկման ալիքը հասավ ֆինանսական շուկային եւ դրամի փոխարժեքին։

Ամսվա սկզբին, մի քանի օրվա ընթացքում, հայկական դրամը կտրուկ արժեզրկվեց՝ 1 դոլարի դիմաց 490 դրամից հասնելով մինչեւ 520 դրամի։ Կենտրոնական բանկը հանդես եկավ հայտարարությամբ, իրականացրեց որոշակի քայլեր արտարժութային շուկայում ցնցումները բացառելու համար, եւ դրամի փոխարժեքը դոլարի նկատմամբ որոշ չափով արժեւորվեց եւ սկսեց տատանվել 500-505 դրամ 1 դոլարի դիմաց միջակայքում։ Սակայն դա երկար չտեւեց։ Ընդամենը մեկ շաբաթ անց դրամը կրկին արժեզրկվեց եւ **այս պահին գտնվում է 1 դոլարի դիմաց 520-525 դրամ միջակայքում։ Ակնհայտ է, որ դա անմիջական արձագանք է ունենալու մեր սոցիալական կացության վրա։** Մասնավորապես, դա արդեն հանգեցրել է սպառողական ապրանքների եւ ծառայությունների գների աճին։

Արձանագրենք այն ապրանքների գումարային թանկացումները, որոնց ականատեսն ենք մենք բոլորս։ Դեռ հոկտեմբերի սկզբին թանկացավ բուսական յուղը՝ **600-650 դրամ միջին գնով վաճառվող այդ ապրանքատեսակի գինը այժմ**




**դարձել է 850-900 դրամ, շաքարավազը թանկացել է 20 դրամով, ալյուրը՝ 20 դրամով, ձուն՝ 1 հատը 20 դրամով, հացը՝ միջինը 20-30 դրամով, թռչնամիսը՝ 1 կգ-ն մոտ 150-200 դրամով, կարագը՝ մոտ 200-250 դրամով։ Կտրուկ թանկացել են մրգերն ու բանջարեղենը։**

Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ուսումնասիրություններն այս առթիվ փաստում են, որ թանկացումները տեղի չեն ունեցել գերիշխող դիրքի չարաշահմամբ։ Ինչը թերեւս տրամաբանական է՝ արդեն նշեցինք, թե դա ինչի հետեւանք է։ Ընդ որում, գների աճը շարունակվում է, եւ առաջիկայում պետք է սպասել ավելի վատթար զարգացումների։ Այս ամենն իր անդրադարձն է թողել նաեւ բանկերի վրա եւ մասնավորապես բնակչության կողմից ներդրվող ավանդների վրա։

**Բանն այն է, որ մի կողմից բանկերում ներդրվող ավանդները ամսե-ամիս նվազում են, մյուս կողմից՝ դրամով ավանդները վերածվում են դոլարայինի։** Այսինքն, բանկերն ավելի քիչ գումարներ են ստանում վարկեր տրամադրելու համար եւ խորանում է դոլարիզացիան՝ դրանից բխող բոլոր բացասական հետեւանքներով։ Ներկայացնենք, թե վերջին ամիսներին ինչպես են փոխվել բնակչությունից ներգրավվող ավանդների չափերը։

Սեպտեմբերի վերջին, նախորդ ամսվա նկատմամբ **բնակչությունից ներգրավված ավանդները նվազել են 7 մլրդ 489 մլն դրամով կամ 0,4 տոկոսով։** Հոկտեմբերին նվազման գործընթացը խորացել է։ Հոկտեմբերի վերջին բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը նախորդ ամսվա նկատմամբ **նվազել է արդեն 69 մլրդ 900 մլն դրամով կամ 4,1 տոկոսով։** Ի՞նչ է անում այս գործընթացին դիմագրավելու համար Կենտրոնական բանկը։ ԿԲ-ն բարձրացնում է երաշխավորված ավանդների չափը։ Սեպտեմբերի 28-ին այդպիսի որոշում է ստորագրել ՀՀ նախագահը։ Ըստ այդ որոշման.

ա) Դրամային ավանդի դեպքում երաշխավորված ավանդի չափը՝ **տասնվեց միլիոն հայկական դրամ։**

բ) Արտարժութային ավանդի դեպքում երաշխավորված ավանդի չափը՝ **յոթ միլիոն հայկական դրամ։**

Ինչպես նաեւ, եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժութային բանկային ավանդներ, եւ դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչեւ տասնվեց միլիոն հայկական դրամով։ Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժութային բանկային ավանդներ, եւ նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ եւ արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի եւ հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով։ **Նշված սահմանաչափերը ուժի մեջ են մտել 2020 թվականի դեկտեմբերի 1-ից եւ տարածվում են նաեւ ուժի մեջ մտնելու պահին գործող ավանդային պայմանագրերի վրա։** Մինչ այդ, երաշխավորված ավանդների չափերը 10 մլն դրամ էր դրամային ավանդների դեպքում եւ 5 մլն դրամ՝ արտարժույթով ավանդի դեպքում։

Այսինքն, նոր որոշմամբ խրախուսվում է ընդհանրապես ավանդներ բանկերում ներդնելը եւ մասնավորապես՝ դրամով ավանդները։ Սակայն արդյո՞ք դա բավարար է, որպեսզի ավանդները «չփախչեն» բանկերից՝ չխոսելով արդեն ավելանալու մասին։ Թերեւս՝ ոչ։ Դրամի արժեզրկման ներկա վիճակը, տնտեսական անկումը, անվստահությունը տնտեսության հեռանկարի նկատմամբ հակառակ արդյունքն են տալիս, ինչը երեւում է նաեւ Կենտրոնական բանկի հրապարակած տվյալներից։

Սրանք ներկա պահին մեր տնտեսության մեջ տեղի ունեցող բացասական զարգացումների մի մասն են ընդամենը։ Զարգացումներ, որոնց դիմագրավելու ցանկություն եւ կարողություն ներկա իշխանությունը չունի։

# Ի՞նչով է պայմանավորված պարենային մթերքի գնաճը

2020 թվ.-ի նոյեմբերից սպառողական շուկայում գնաճ է նկատվել, որը կազմել է 1,6%։ Ինչպես տեղեկացնում է Վիճակագրական կոմիտեն, հոկտեմբեր ամսի գնաճը կազմել է 1,3%։

Երեւանյան սուպերմարկետներում, խանութներում հացի գինը բարձրացել է 10 դրամով։ Բացի այս, թանկացում է արձանագրվել նաեւ հավկիթի շուկայում. ձվի մեկ հատի գինը 55-60 դրամի փոխարեն դարձել է 70-72 դրամ։ Թանկացել է նաեւ կաթնամթերքը եւ թռչնամիսը։

Սննդամթերքի որոշ խմբեր այս տարվա նոյեմբերին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, էական թանկացել եւ էժանացել են։ Էժանացել են բանջարեղենը, ձուկը, ծովամթերքը, թանկացել են ձեթը, շաքարավազը, ձուն եւ այլն։

Նախորդ տարվա նոյեմբեր ամսվա հետ համեմատած թանկացել է.

Միրգը՝ 9,7%-ով,

Ձեթը՝ 20,9%-ով,

Կաթնամթերքը, պանիրը եւ ձուն՝ 2,6%-ով,

Շաքարն ու շաքարավազը՝ 26,6%-ով,



Միեւնույն ժամանակ նվազել է .

Բանջարեղենը՝ 9,2%-ով,

Ձկան եւ ծովամթերքի գները՝ 2,8%-ով։

Պետք է արձանագրել, որ քաղաքացիները այս թանկացումների մասին ավելի քան երկու ամիս է բարձրաձայնում են։

Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (ՀՀ ՏՄՊՊՀ) փոխանցում է. «Շաքարավազի, ձեթի, կարագի թանկացումն առավելապես պայմանավորված է օբյեկտիվ գործոններով»։

Ըստ ՀՀ ՏՄՊՊՀ-ի (Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով) ներկայացրած տվյալների, շաքարավազի գնաճի պատճառ կարող է լինել միջազգային շուկայում դրա գնի բարձրացումը, ներմուծվող շաքարավազի ձեռքբերման գնի բարձրացումը, դրամի արժեզրկումը եւ այլն։ Ըստ սպիտակ շաքարի գնի ինդեքսի (White Sugar Price Index) սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին շաքարավազի միջազգային գները նույնպես բարձրացել են։

Հաջորդ մթերքի՝ ձեթի վերաբերյալ հանձնաժողովը հայտնում է, որ առեւտրային ցանցերում ձեթի գնի բարձրացումը պայմանավորված է մատակարար ընկերությունների կողմից ձեթի իրացման գնի բարձրացմամբ։ Միաժամանակ պետք է արձանագրել, որ նշված ժամանակահատվածում տեղի է ունեցել ձեթի միջազգային գների էական աճ։

Պետք է նշել, որ 2020 թվականի հոկտեմբեր ամսվա համեմատությամբ նոյեմբերին 1 տոննա արեւածաղկի ձեթի գինը բարձրացել է 200$-ով, իսկ փետրվար ամսվա հետ համեմատությամբ 400-470$-ով։

«Խոշոր առեւտրային ցանցերը պահպանել են մինչեւ ռազմական դրության հայտարարումն ալյուրի իրացումից ստացվող շահութաբերության մակարդակը, եւ ալյուրի գնի բարձրացումը պայմանավորված է ձեռքբերման գների բարձրացմամբ», ներկայացվում է ՏՄՊՊՀ-ի պաշտոնական էջում։

Ալյուրի արտադրությամբ զբաղվող երկու խոշոր տնտեսվարողների ներկայացրած տեղեկատվության համաձայն, էականորեն բարձրացել են այդ ընկերությունների կողմից ցորենի ձեռքբերման գները։

2020 թվականի օգոստոս ամսվա սկզբին տնտեսվարողները Ռուսաստանից ցորեն են ձեռք բերել 1 կգ-ի դիմաց վճարելով 84 դրամ, իսկ նոյեմբեր ամսին՝ շուրջ 104 դրամ (շուրջ 24 %-ով ավել)։

Ինչպես նաեւ, ՊԵԿ-ի (Պետական եկամուտների կոմիտե) փոխանցած տեղեկությունների վերլուծությամբ արձանագրվել է, որ բացի ՌԴ-ից տնտեսվարողները ցորեն ներմուծել են նաեւ Վրաստանից, որի համար երբեմն վճարել են ԱՄՆ դոլարով, որից էլ հետեւում է, որ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկումը նույնպես ազդել է ներմուծման գների բարձրացման վրա։

Իսկ ինչ վերաբերում է հավի եւ ձվի թանկացմանը, այստեղ էլ պատճառը ձեռքբերման գների բարձրացումն է։ Հավի ձվի արտադրությամբ զբաղվող չորս խոշոր ընկերությունների ներկայացրած տեղեկությունների համաձայն, ձվի գնի բարձրացման պատճառը կերի ձեռքբերման գների բարձրացումն է։

Եվ այսպես կարող ենք ասել, որ ըստ պաշտոնական տեղեկատվության պարենային մթերքների գնաճը պայմանավորված է օբյեկտիվ գործոններով՝ ձեռքբերման գների բարձրացմամբ։

ՀԱՍՄԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՀՊՄՀ կուլտուրայի ֆակուլտետ
Լրագրության բաժին 3-րդ կուրս

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

*Իրավաբան, հասարակական գործիչ Գայանե Գեորգյանը ծնվել է Թբիլիսիում, ապա ընտանիքով հաստատվել Ռուսաստանում: Հելսինկյան միջազգային կոմերցիոն արբիտրաժի ԱՊՀ եւ ԵԱՏՄ երկրների մասնաճյուղի տնօրենն է: 2018 թվականից ղեկավարում է իր հիմնադրած «Վիկտորիա» միջազգային բարեգործական հիմնադրամը, որը երկու տարվա ընթացքում հրատարակել է երեք մեծածավալ ալբոմ-ուսումնասիրություն. «Դադիվանք՝ վերածնված հրաշալիք» (2018, հայերեն, անգլերեն, ռուսերեն. ֆրանսերեն թարգմանությունն անտիպ է), «Հայկական որմնանկարչություն» (այս երկուսը՝ հեղինակային կոլեկտիվ, 2019, հայերեն) եւ «Որմնանկարների վերականգնումը վաղ քրիստոնեական հայկական մի շարք եկեղեցիներում» (հեղինակներ՝ Արա Զարյան, Քրիստին Լամուրե, 2019, հայերեն եւ անգլերեն): Գայանեն ապրում է Մոսկվայում եւ Երեւանում, ունի չորս դուստր եւ գործուն կերպով մասնակցում է Հայաստանի եւ Արցախի Հանրապետության մշակութային կյանքին...*

# Գայանե Գեորգյան. «Աշխատել, արարել, ստեղծագործել՝ հանուն հայրենիքի»

**-Սիրելի Գայանե, լինելով իրավաբան՝ դու ներգրավվեցիր հայ մշակութային նախագծերում: Ինչպե՞ս դա բացատրել՝ պարզապես սեր արվեստի հանդե՞պ, թե՞ ավելին:**

-Իրավաբանի հիմնական առաքելությունը մարդու իրավունքները պաշտպանելն է, թույլերին, զրկվածներին ու ճնշվածներին պաշտպանելը, հետեւաբար ինձ համար իրավագիտությունն անմիջականորեն կապված է մշակույթի, մշակութային ժառանգության եւ համաշխարհային նշանակություն ունեցող արժեքների պաշտպանությանը, իսկ այդպիսի արժեք է, անկասկած, նաեւ մեր հայկական մշակութային ժառանգությունը: Ապրած լինելով հեռու պատմական հայրենիքից ու գալով այստեղ՝ ես սկսեցի ուսումնասիրել մեր երկիրն ու մշակույթը: Դա նման էր կախարդական մի աշխարհ կատարված ճանապարհորդության, երբ իրար հետեւից, Հայաստանում ու Արցախի Հանրապետությունում, սկսեցի բացահայտել մեր բազմակողմանի մշակույթի բոլոր հրաշալիքները, գեղեցկություններն ու մարգարիտները, որոնց նմանը չկա աշխարհում:

**-Արցախը կարեւոր տեղ է զբաղեցնում քո գործունեության մեջ...**

-Երբ կյանքդ, մտածողությունդ, գիտելիքդ ձեւավորվում են օտար երկրում, երբ մեծանում ես մի քանի մշակույթներում եւ, առաջին հերթին, քեզ համարում ես աշխարհի մարդ ու շատ մշակույթների ու ավանդույթների կրող, գալիս է մի պահ, երբ այդ ամենը կուտակվում է քո մեջ, կարծես միանում մեկ այլ, շատ միասնական համակեցության, այնժամ հասկանում ես, որ ինչ էլ պատահի, վաղ թե ուշ պետք է ինչ-որ հետք թողնես քո երկրի եւ ժողովրդի համար: Դա քո պարտքն է, ուստիեւ երբ ինձ ասում են. «Օ՜, շնորհակալություն», ես ասում եմ. «Ե՛ս պետք է շնորհակալություն հայտնեմ Աստծուն ու ծնողներիս, որ հայ եմ ծնվել»: Եվ իմ պատկանելությունն իմ ժողովրդին, իմ դարավոր մշակույթին, չէր կարող ինձ անտարբեր թողնել ու անտեսել ցավն ու այն թույլ կետերը, որոնք մենք, ցավոք, ունենք: Անկեղծորեն կասեմ, որ հենց Արցախը եւ հատկապես Դադիվանքն են հիմք հանդիսացել, որ իմ մեջ հղացավ կյանքի կոչել բարեգործական հիմնադրամը եւ երկու կարեւոր նախագծերը («Հայկական արժեքները համաշխարհային ժառանգության մեջ» եւ «Հայ որմնանկարները՝ համաշխարհային ժառանգության անբաժանելի մաս»): Այդ ամենը սկիզբ առավ, երբ ես նպատակ դարձրի հայկական եկեղեցիներում հայտնաբերել Սուրբ Նիկողայոս հրաշագործի պատկերը: Ինչո՞ւ ինձ հատկապես հետաքրքրում էր ա՛յդ սուրբը, քանի որ նա համաքրիստոնեական է, նրա պաշտամունքը տարածված է ողջ աշխարհում: Երկար որոնումներն ինձ տարան Դադիվանք, որտեղ Սուրբ Նիկողայոսը հառնեց ութհարյուրամյա որմնանկարի տեսքով: Եվ առաջին բանը, որ ասացի ապրածս ցնցումից հետո, եղավ՝ «Աշխարհը պիտի՛ իմանա այս մասին»: Ես որոշեցի, որ պետք է հրատարակել գիրք, որքան էլ ինքս հեռու էի արվեստի պատմությունից կամ հրատարակչական գործից, սակայն դա իմ հոգու եւ սրտի կանչն էր:

**-Եվ քո նախաձեռնությամբ 2018-ին լույս տեսավ «Դադիվանք. վերածնված հրաշալիք» ուսումնասիրություն-ալբոմը, եզակի մի աշխատություն, որը ներկայացնում է ոչ միայն հայ ճարտարապետության այս գլուխգործոցը, այլեւ Սուրբ Նիկողայոսի պատկերագրությունը հայ իրականության մեջ: Հատկանշական է, որ 13-րդ դարում Արզու իշխանուհին կառուցել է Դադիվանքի կենտրոնական կառույցը, իսկ 21-րդ դարում մեկ այլ հայուհի ջանք չի խնայում այն աշխարհով մեկ ճանաչել տալու համար... Դեռեւս այն ժամանակ զգում էիր, որ ճարտարապետական այդ գլուխգործոցը վտանգված է ու հարկ է այն վավերագրել:**

-Ես կարող էի պարզապես գնալ այնտեղ որպես հասարակ զբոսաշրջիկ, մոմ վառել, աղոթել ու հեռանալ, բայց... հավանաբար ժառանգականությունն ինձ դրդեց անել շատ ավելին: Իմ մանկությունը, անհատականությունն ու գիտակցությունը ձեւավորվել են 1915 թվականի Եղեռնի, սպանված հարազատների եւ մտերիմների ու կորցրած տարածքների ցավի վերաբերյալ խոսակցությունների մթնոլորտում: Իմ ընտանիքը հայրենասեր է, անցել է հարյուրամյա պատմության բոլոր փուլերով: Իմ նախապապը կռվել է Անդրանիկի հետ, ռազմիկ է եղել նաեւ իմ պապը, որը կռվել է ֆաշիզմի դեմ եւ ստացել Կարմիր աստղի շքանշան, ողջ կյանքում նախնիներս ու ծնողներս պաշտպանել են իրենց հայ լինելու իրավունքը օտար երկրներում: Եվ հայ լինելու, սեփական մշակույթը պահպանելու ու դրա համար պայքարելու այս ավանդույթը չէր կարող ինձ անտարբեր թողնել: Ես գիտեի, որ վաղ թե ուշ այս առաքելությունն իրականություն կդառնա: Երբ ես հայտնաբերեցի Սուրբ Նիկողայոսին, այնպիսի զգացողություն ունեի, կարծես քայլում էի խիտ անտառով կամ ջունգլիներով ու հանկարծ ծառերի ետեւում հայտնաբերեցի մարդկությանն անհայտ մնացած մի գեղեցիկ տաճար: Դադիվանքն ինձ համար հենց այդպիսի հրաշալիք էր, որը ինչ-որ մի տեղ, լեռների խորքում էր, այնքա՜ն հանդարտ, ինչ-որ տեղ՝ այդ պահին մոռացված: Այս վանքում ընդհանուր քրիստոնեական սրբի հայտնաբերման գործոնն ինձ համար այն առեղծվածներից է, որը մինչեւ հիմա հանելուկ է մնում եւ այն ցանկանում եմ պարզել: Ավելի ուշ իմացա, որ սա հինավուրց վանք է, որն, ըստ ավանդության, առաջին դարում հիմնադրվել է Թադեւոս առաքյալի հետեւորդ Դադիի մահվան վայրում, որ դա եղել է հայ մատենագրության եւ գրչության կենտրոն, ունեցել է դպրոց, այնտեղ ապրել են չորս հարյուր հայ վանականներ եւ աշխարհում առաջին վանքն է, որտեղ եղել է կանանց մենաստան: Այս փաստն է՛լ ավելի է ապշեցնում: Բոլոր աղքատ, նվաստացած կանայք կամ դժվար իրավիճակում հայտնված այրիներն իրենց ապաստանը գտել են այս վանքում: Համաշխարհային պատմության մեջ Դադիվանքը ես համարում եմ առաջին վայրերից մեկը, որը ֆեմինիզմի հիմքն է դրել: Հիմա բոլորն են խոսում կանանց իրավունքների մասին, իսկ արդեն այն ժամանակներում Արցախում հարգվում էին կանանց իրավունքները:



**-2019-ի մարտին քո ջանքերի շնորհիվ, արցախցի երեխաներն առաջին անգամ հանրապետությունը ներկայացրին միջազգային փառատոնում պատմության մեջ...**

-Երբ Դադիվանքի շնորհիվ ես հայտնաբերեցի հրաշալի Արցախ երկիրն ու նրա տաղանդավոր ժողովրդին, մտքերս հանգիստ չէին տալիս ինձ, ու ես կատակով ասում էի. «Ի՞նչ անեմ ձեզ հետ, դուք բոլորդ այնքան տաղանդավոր եք...»: Իսկապես, գործ ունենք շատ ազնվական, համարձակ ժողովրդի հետ... Այդ ժամանակ ես աշխատում էի Արցախի համար մանկական փառատոնի կազմակերպման գաղափարի վրա: Իմ գաղափարին արձագանքեց իմ լավագույն ընկերներից **Տատյանա Շչեպետովան**, որը «Ֆա-սի-լյա. օտար լեզուների երգեցողության մրցույթ» մոսկովյան փառատոնի կազմակերպիչն է: Արդյունքում Ստեփանակերտի համար ստեղծվեց շատ հետաքրքրական մի ձեւաչափ՝ «Ֆա-սի-լյա. աշխարհի երեխաներն ընդդեմ պատերազմի. օտար լեզուների երգեցողության մրցույթ» վերնագրով: Ինչո՞ւ այն հղացանք նման միջազգային ձեւաչափով (երգերը երգվում էին հինգ օտար լեզվով), քանի որ այն պետք է լրացուցիչ կերպով գրավեր համաշխարհային հանրության ուշադրությունը դեպի Արցախ: Փառատոնի բոնուսը եղավ ելույթները Մոսկվայի լավագույն եւ ամենամեծ հարթակներից մեկում: Եթե չլիներ համաճարակը, այս տարի նույնպես ելույթ կունենային: Ավելեւս չասած, որ երեսուն տարի, քանի գոյություն ուներ Արցախի Հանրապետությունը, արցախցի երեխաներն ա՛յս փառատոնի ընթացքում միջազգային բեմում առաջին անգամ հանդես եկան Արցախի Հանրապետության անունից: Դա կարեւոր դիվանագիտական քայլ էր: Փառատոնը շարունակվելու է, մենք այն նախատեսել ենք 2021 թվականին, ու մեզ ոչինչ չի խանգարի: Միշտ ասում եմ, որ հիմնադրամի բոլոր նախագծերը՝ կապված Արցախի եւ հայ աշխարհի մշակութային քրիստոնեական ժառանգության պահպանման հետ, շարունակվելու են:

**-Բոլորին, անշուշտ, կհետաքրքրի, թե ի՞նչ միջոցներով ես իրականացնում նախագծերդ:**

-Բոլոր միջոցները նստած են քո դիմաց, սիրելի ընկե՛ր (ծիծաղում ենք): Միջոցները, իհարկե, ամենացավոտ թեման են, հովանավորներ չկան, մենք գոյատեւում ենք մեր անձնական խնայողությունների ու ընկերների օգնության հաշվին: Եվ որքա՞ն կշարունակվի դա: Ես անում եմ իմ գործը, այն ուղարկում եմ տիեզերք, էներգիայի մեջ, իսկ այնտեղ թող մյուսները որոշեն: Ես միշտ սիրել եմ այս խոսքերը. մարդկանց հետ իմ վարվելակերպն իմ կարման է, իսկ թե ինչպես են նրանք պատասխանում ինձ՝ դա էլ իրենցն է:

**-Բայց, այնուամենայնիվ, մաղթում եմ, որ քո նախագծերի համար ունենաս հարուստ, առատաձեռն հովանավորներ...**

-Ես միշտ ասում եմ, որ ոչ մեկի համար չեմ աշխատելու եւ չեմ սիրում աշխատել ինտրիգներով, բայց ես միշտ բաց եմ լավ մարդկանց, գործընկերների, այն անձանց համար, որոնք ինձ նման գաղափարապես հավատարիմ են այս գործին: Այսինքն, եթե ինչ-որ մեկն իր համար ինչ-որ շահ, անձնական ամբիցիաներ է փնտրում այս նախագծերում՝ չի գտնի: Եթե դու գործ ունես սրբազան երեւույթների, հասկացությունների հետ, ապա դրանց պետք է ծառայել անշահախնդրորեն...

**-Գայանե, չեմ կարող չնկատել, որ յոթ տարի առաջ, երբ մենք ծանոթացանք, մեր շփումը միմիայն ռուսերեն էր, իսկ դու հիմա սահուն հայերեն ես խոսում... Ինչպե՞ս հասար լեզվի իմացության նման մակարդակի:**

-Դրա համար անհրաժեշտ է երկու կարեւոր բաղադրիչ: Առաջին հերթին պետք է ցանկություն ունենալ տիրապետելու լեզվին ու դժվարությունները հաղթահարելու հավակնությունները: Եվ երկրորդ՝ պետք է շրջապատես քեզ ճիշտ, գրագետ մարդկանցով ու սպունգի նման կլանես նրանցից ամեն լավը: Այս բոլոր տարիներին ես մարտկոցի նման կուտակում էի եւ սովորում, անհագորեն սովորելով նկարիչներից, երաժիշտներից, հանրային գործիչներից: Միշտ ասում եմ, որ առաջին մարդկանցից մեկը, որին հանդիպել եմ Երեւանում, հատկապես հանրային ու մշակութային կյանքի ոլորտում, եղել ես դու, եւ քո միջոցով ինձ համար մեկը մյուսի հետեւից բացահայտվեցին հետաքրքրական մարդիկ, որոնց բոլորին ես ականջ էի դնում եւ ի վերջո, փա՜ռք Աստծո, կարողանում եմ արտահայտվել իմ մայրենի լեզվով: Պետք է անընդհատ խոսել,

կարդալ, գլխավորը՝ չամաչել արտահայտվելուց: Եթե ես որեւէ բառ չգիտեմ, չեմ ամաչում հարցնել, թե ինչպես է դա հայերեն: Միշտ չեմ ամաչում հարցնել այն, ինչը չգիտեմ:

**-Ո՞րն էր կարդացածդ վերջին գիրքը:**

-Իմ հրատարակածները (ծիծաղում ենք): Ես դժվարությամբ կարողանում եմ կարդալ միայն հիմնադրամի այն նյութերը, որոնք գրված են հայերենով: Ի դեպ, դա մայրենիի իմ իմացությունը շատ առաջ մղեց: Իսկ առհասարակ, ես միշտ կարողացել եմ հայերեն գրել եւ կարդալ, հինգերորդ դասարանում, 12 տարեկանում առաջին անգամ վերցրի «Մեր այբբենարանը» հայոց լեզվի դասագիրքը ու սկսեցի պարզապես սովորել: 13 տարեկանում արդեն անգիր էի անում մեր բանաստեղծների, օրինակ՝ Պետրոս Դուրյանի գործերից... «Ինչո՞ւ ապշած են, լճա՛կ, Ու չեն խայտար քու ալյակք»...

**-Այն էլ «Լճակը», երբ Հայաստանում ծնված-մեծացած շատ երեխաներ հաճախ դժկամորեն են անգիր անում այն... Գայանե, մեր վերջին ազգային աղետից հետո ինչպե՞ս ես պատկերացնում քո գործունեության շարունակությունը:**

-Ինձ զանգահարում էին ու խնդրում հաղորդակից դարձնել իմ լավատեսությանն ու եռանդին: Ես չեմ պատրաստվում հուսահատվել, միշտ ասում եմ, որ չեմ պատրաստվում արցունք թափել, տխրել, տառապել ու սգալ հանուն Հայրենիքի: Բավական է, ես նույնիսկ արգելում եմ մարդկանց այդպես մտածել: Հարյուր տարին չափազանց շատ է տառապելու համար, եւ ես հիմա բոլորին ստիպում եմ, նույնիսկ՝ հրամայում եմ աշխատել, արարել, ստեղծագործել հանուն հայրենիքի, լինել լավատես, վերջապես սովորել հարգել միմյանց, օգնել միմյանց անշահախնդիր ձեւով, սովորել ուրախանալ միմյանց հաջողություններով: Եվ եթե տեսնում եք, որ մեկը լավ գաղափար ունի, որ ինչ-որ օգտակար բան է ուզում անել հայրենիքի համար, օգնե՛ք նրան: Նրան, ով, թերեւս, ձեզանից մի փոքր հեռուն է տեսնում: Երեք տարի առաջ ես թակում էի բոլոր դռները՝ կառավարության, միջազգային կազմակերպությունների, բոլոր մակարդակներում, Հայաստանում թե արտերկրում, ես բարձրաձայնում էի այն, ինչը տեղի է ունենում հիմա: Իմ նախագծերի առաջաբանները եւ հիմնադրամի առաքելությունը այսօր հնչում են որպես կանխատեսում: Մարդիկ պարզապես չէին հասկանում, թե ինչ եմ խոսում: Ու հիմա ինձ համար ծիծաղելի է այն փաստը, որ տեղից վեր կացողը, անկախ իր որակից կամ մտավոր ունակությունից, նվիրվածությունից կամ խնդրի կարեւորության գիտակցումից, հանուն սեփական գովազդի բարձրացնում է մշակութային ժառանգության պահպանման թեման: Իսկ ո՞ւր էիք դուք առաջ, պարոնա՛յք...

**-Իսկապես, պատերազմը շատերի համար է դառնում շահարկումների ու սեփական շահերը հետապնդելու լավ առիթ... Շատ սիրելի Գայանե՛, իսկ ո՞րն է քո հաջորդ նախագիծը:**

-Դարձյալ գիրք է, կրկին իր բնույթով աննախադեպ հայագիտության համար: Արցախցի հետազոտող **Սլավա Սարգսյանի**՝ երեսուն տարիների պրպտումների արդյունք հանդիսացող «Արցախի ամրոցները» շուրջ 1000 էջից բաղկացած հանրագիտարանը, որ ներկայացնում է Արցախի՝ մինչեւ մեր օրերը պահպանված ավելի քան 100 ամրոցները: Առայժմ՝ հայերեն, սակայն դրանով չենք սահմանափակվի: Ալբոմն օժտված է 1500-ից ավելի լուսանկարներով, 100-ից ավելի չափագրություններով ու տեղագրական քարտեզներով: Հատորի շնորհանդեսը նախատեսում եմ կատարել հունվարի կեսին...

**Ի ՀՈՒՇ**

# «ԳՆԱՍ ԲԱՐՈՎ, ԲԵԼԼԱ ԱՄՈՎՆԱ...»

*Բելլա Մասումյան (1937-2020)*

Դեկտեմբերի 8-ին, 84 տարեկանում, ծանր եւ երկարատեւ հիվանդությունից հետո մահացել է Բելառուսի ժողովրդական արտիստուհի Բելլա Ամովնա Մասումյանը: «Նրա մահը ծանր եւ անփոխարինելի կորուստ է բոլորիս, նրա ընկերների եւ նրա մեծ տաղանդի միլիոնավոր երկրպագուների համար, իսկական կորուստ արվեստի համար, որին նա նվիրել էր իր ողջ կյանքը»,- հայտարարել է Մինսկի Գորկու անվան ազգային ակադեմիական դրամատիկական թատրոնը, որտեղ 58 տարի աշխատել է «բելառուսական թատրոնի լեգենդ» անվանված դերասանուհին:

Բելլա Մասումյանը ծնվել է 1937-ին, Պավլոգրադում (Դնեպրոպետրովսկի մարզ, Ուկրաինա), հայ հոր եւ լեհ մոր ընտանիքում: Ավարտել է Բելառուսի թատերական արվեստի պետական ինստիտուտը: 1961 թվականից աշխատել է Գորկու անվան թատրոնում: Գեղեցկատես, խորունկ, կրքոտ եւ մտավորական խառնվածքով Մասումյանը կատարել է դրամատիկական հերոսուհիների դերեր, որոնք բնութագրվել են հուզականությամբ, ռոմանտիկ գունազարդման եւ պատկերների հոգեբանական խորությամբ: հանդես է եկել 100-ից ավելի դերակատարումներով՝ «Երկուսը ճոճանակի վրա», «Արշալույսներն այստեղ խաղաղ են», «Երեք քույր», «Պիգմալիոն», «Տեսնելով սպիտակ գիշերները», «Մեկ երկնքի տակ» եւ բազում այլ բեմադրություններում: Արժանացել է բազմաթիվ մրցանակների ու պարգեւների: Նրա մասին է Բելառուսի առաջատար թատերական քննադատ **Տատյանա Օռլովայի** «Այլմոլորակուհին» գիրքը (2012):



Իսկ մեզ համար կարեւոր է իմանալ, որ Բելլա Մասումյանը ոչ միայն 1980-ականների Գորկու անվան թատրոնի կազմում հյուրախաղերով հանդես է եկել Երեւանում, այլեւ մանկության տարիներին, Երկրորդ աշխարհամարտի տարիներին որոշ ժամանակ ապրել է Հայաստանում: Նրա հայրը՝ Համո Մասումյանը, եղել է ռազմական օդաչու: Աղջիկն ապրել է տատիկի՝ Նեկտար Գրիգորեւնայի մոտ, որին պաշտել է: 2019-ին Մինսկի հայերի «Միասին» պարբերականին տված հարցազրույցում նա ասել է. « Իմ հոբելյանին Հայաստանի դեսպանն իմ մասին լավ արտահայտվեց՝ հայ ժողովրդի բելառուս դուստր: Հայաստանն իմ մեջ զուգորդվում է գործած գլխարկ հագած տատիկիս հետ: 1915 թվականին թուրքերը սպանել են պապիկիս, եւ նա այրի է մնացել երեք երեխաների հետ: Նիհար, հմայիչ հայուհի էր.... Ես երբեք չեմ սեւեռվել մարդկանց ազգության վրա, բայց երբ մի երաժշտական մրցույթում տեսա մասնակից հայուհու, ցանկացա, որ նա՛ լինի հաղթողը: Հավանաբար, արյունն ազդում է ենթագիտակցական մակարդակի վրա, չնայած մայրս լեհուհի է ու մենք երկար չենք ապրել Հայաստանում: Ինձ դուր է գալիս հայ ժողովուրդը՝ համբերատար, հավատարիմ, մտավորական, տաղանդավոր: Նրան հաջողվեց գոյատեւել ու շարունակել ապրել ու ինքնարտահայտվել: Հայերեն ես գիտեմ միայն «բալիկ ջան» եւ «ցավդ տանեմ» խոսքերը: Ցանկանում եմ հայ ժողովրդին մաղթել խաղաղություն: Նա արժանի է դրան, ինչպես յուրաքանչյուր ժողովուրդ, բայց քանի որ խոսում ենք Հայաստանի մասին, ես ուզում եմ, որ մարդիկ երջանիկ ապրեն, որ լիություն լինի ընտանիքներում, շողա արեւը ու ծաղկեն ծաղիկները: Հայաստանը գեղեցիկ երկիր է: Սեւանը, լեռները, եկեղեցիները, օդն այնպիսին են, որ շունչդ կտրվում է...»:

Թատերագետների կարծիքով՝ Բելլա Մասումյանը մեծ ներդրում է ունեցել բելառուսական թատերարվեստի զարգացման գործում: Նա ապրել է հանուն գործի եւ ոչ ոք չի ունեցել՝ թատրոնից ավելի սիրելի: «Գորկու ռուսական թատրոնի վերջին մեծ դերասանուհի՛ն: Գնաս բարով, Բելլա Ամովնա: Եվ, շատ հավանական է՝ գնաս բարով, Ռուսական թատրոն»,- գրել է բելառուս գրող **Անատոլի Ավրուտինը** դերասանուհու մահվան առթիվ:

**Ա. Բ.**

# Լույս է տեսել դոկտ. Վ. Շեմմասյանի «Մուսա լեռան հայերը» հատորը

Ֆրեզնոյի Կալիֆոռնիա պետհամալսարանի հրատարակչությունը վերջերս լույս է ընծայել դոկտ. **Վահրամ Շեմմասյանի «Մուսա լեռան հայերը: Անհայտությունից դեպի ցեղասպանության դիմադրություն եւ համբավ, 1840-1915»** խորագրով հատորը, որը հեղինակի երկրորդ գիրքն է այդ թեմայի շուրջ: Առաջինը՝ «Մուսա լեռան հայերը: Սոցիալ տնտեսական եւ մշակութային պատմություն, 1919-1939 թթ.» վերնագրով հրատարակվել էր 2015-ին Բեյրութի Հայկազյան համալսարանի կողմից:

«Մուսա լեռան հայերը» համապարփակ պատմությունն է մի ժողովրդի, որն աչքի ընկավ 1915-ի ցեղասպանության դեմ իր հերոսական պայքարով: Շեմմասյանը մանրազնին ուսումնասիրել է Մուսա լեռան վեց գյուղերի սոցիալ-տնտեսական, կրթական, քաղաքական եւ կրոնական պատմությունը եւ ընթերցողին է ներկայացրել մինչ այժմ անհայտ փաստեր այդ վայրերի ազգաբնակչության մասին, որոնց հաստատակամությունն ու խիզախությունը ի վերջո պսակվեց ինքնապաշտպանական հաջողությամբ», գրված է «Արմինիըն Միրոր-Սփեքթեյթրի» գրախոսականում: Գիրքը վեր է հանում ժամանակաշրջանի կարեւորությունը, որի ընթացքում մուսալեռցիները մեկուսացվածությունից եւ անհայտությունից դարձան հավաքական ու միասնական մի բռունցք՝ պատրաստ պաշտպանելու իրենց ազգային ինքնությունն ու իրավունքները: Հատորը բաղկացած է 7 գլուխներից եւ վերջաբանից: Այն ներառում է նաեւ 5 քարտեզ, 14 աղյուսակ եւ 162 հազվադեպ լուսանկար:

Դոկտ. Վահրամ Շեմմասյանը Նորթրիջի Կալիֆոռնիա պետհամալսարանի հայագիտական ուսումնասիրությունների ծրագրի հիմնադիրն ու տնօրենն է: Արմատներով մուսալեռցի: Դոկտորականի գիտական աստիճան է ստացել Լոս Անջելեսի Կալֆոռնիա համալսարանից: Դասախոսություններով հանդես է եկել տարբեր վայրերում, մասնակցել է միջազգային ակադեմիական գիտաժողովների: Արժանացել է մրցանակների:




**Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ**

# Հայ արձակը՝ շվեդերեն

Ստոկհոլմում Հայաստանի դեսպանատան ջանքերով լույս է տեսել հայկական պատմվածքների մի ընդարձակ ժողովածու՝ «**Բաց երկնքի տակ հին լեռներ**» վերնագրով («Թրանան» հրատարակչություն): Այն ընդգրկում է ստեղծագործություններ 20-21-րդ դարերի հայ 26 արձակագիրներից (Աղասի Այվազյան, Զորայր Խալափյան, Հրանտ Մաթեւոսյան, Ռուբեն Հովսեփյան, Վահագն Գրիգորյան, Անահիտ Թոփչյան, Ալիս Հովհաննիսյան, Վրեժ Իսրայելյան, Գուրգեն Խանջյան, Լեւոն Ջավախյան, Արա Նազարեթյան, Արմեն Շեկոյան, Լեւոն Խեչոյան, Հրաչ Բեգլարյան, Կարինե Խոդիկյան, Վազգեն Սարգսյան, Նարինե Կրոյան, Հովհաննես Երանյան, Սուսաննա Հարությունյան, Հրաչյա Սարիբեկյան, Անուշ Ասլիբեկյան, Արամ Պաչյան, Համբարձում Համբարձումյան, Լեւոն Շահնուր, Գրիգ, Վանո Սիրադեղյան):




Նշենք, որ սա շվեդերենով հայկական պատմվածքների երկրորդ ժողովածուն է: Առաջինը եւ մինչ այս հատորի հրատարակվելը՝ միակը, լույս էր տեսել 1968-ին, շվեդ թարգմանիչ Կառլ Էլոֆ Սվենինգի նախաձեռնությամբ, սակայն թարգմանությունները կատարվել էին ֆրանսերենից եւ ռուսերենից: Ներկա հատորում բոլոր թարգմանությունները հայերենից կատարել է շվեդաբնակ թարգմանչուհի, Երեւանի պետական համալսարանում ուսանած **Լուսյա Ադամյանը** եւ **Մարիան Վալենսիսը**: Գրքի առաջաբանը գրել են Շվեդիայի Թագավորությունում Հայաստանի նախկին դեսպան Արտակ Ապիտոնյանը, նաեւ ընդգրկված է գրականագետ **Վահրամ Դանիելյանի** նախաբանը:

**Ա. Բ.**

**ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ**

**Անվտանգության հարցերով փորձագետ**

# Ադրբեջանցի գործարար Գոդ Նիսանովի ընկերները

*Մարդիկ կան, որ պատրաստ են պետություններում կարեւոր դիրքեր զբաղեցնող անձանց ժամանցը կազմակերպել: Իհարկե նման ընկերությունը անշահախնդիր հիմքերի վրա չի կառուցվում, ընդ որում՝ երկուստեք...*

*Մեր ժամանակներում շատ կարեւոր է «ճիշտ» ընկերներ ընտրելը...*

Ինչպես հայտնի է, Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայում ապրում եւ գործում են շատ տարբեր ազգություններ ներկայացնող խոշոր գործարարներ, այսպես կոչված **ռանտյեներ** (գործարար, որը ռենտայով մեծ շահույթներ է ստանում): Այդպիսի գործարարները, ինչպես նշեցի, շատ են, եւ նրանց թվարկելը ձանձրալի գործ է, ընդ որում՝ շատ անհետաքրքիր: Թեմա է ընթերցողիս համար:

Այսօր ես ուզում եմ մի փոքր խոսել նրանցից մեկի մասին, որը, ըստ «Ֆորբս» հանդեսի վարկածի, 2,7 միլիարդ դոլարի կարողություն ունի, Ռուսաստանում, այդ թվում եւ Մոսկվայում ունի անթիվ եւ անհամար անշարժ գույք, որոնք գրանցված են բարեկամների, ազգականների, ընկերների եւ «պիտանի» մարդկանց անուններով: Խոսքս ծագումով ադրբեջանցի գործարար **Գոդ Նիսանովի** մասին է: Վերջինս ծնվել է Ադրբեջանի Կարմիր Սլոբոդա բնակավայրում 1972թ. (այդ բնակավայրում ապրում էին մեծ քանակությամբ լեռնային հրեաներ), եւ դեռ պատանի տարիքում տեղափոխվել է Մոսկվա: Առաջին գործը, որ նա սկսել է անել, դա իր հայրենակից Զարախ Իլիեւի հետ առեւտուրն էր Չերկիզովյան շուկայում: 2000-ական թվականների կեսից Նիսանովն իր կովկասցու ճարպկության, մտավոր ճկունության, հրեական միջավայրում մեծանալու եւ որոշակի հատկանիշներ ձեռք բերելու, մի քանի լեզուների տիրապետելու եւ, վերջապես, նպաստավոր կապեր ունենալու շնորհիվ գրանցեց իր առաջին հաջողությունները: Չմոռանանք նշել նաեւ, որ Չերկիզովյան շուկայի տերը՝ Թելման Իսմաիլովը, ծագումով լեռնային հրեա Բաքվից, Նիսանովի համերկրացին էր:

Իզուր չէր, որ Գոդ Նիսանովին անվանում էին ընկերներ եւ ընկերություններ ստեղծելու չեմպիոն:

Մոսկվայում Նիսանովի առաջին հաստատուն կապերից մեկը՝ Մոսկվայի Ներքին գործերի գլխավոր վարչության պետ **Վլադիմիր Պրոնինն** էր: Վերջինիս որդին՝ **Ալեքսանդր Պրոնինն** ընդունվեց աշխատանքի «Իմպերիալ-2000» ընկերությունում, որը պատկանում էր Նիսանովին:

2009թ. Վլադիմիր Պրոնինը հեռացվեց զբաղեցրած պաշտոնից, եւ Նիսանովին անհրաժեշտ էր շտապ լրացնել այդ այսպես կոչված բարեկամի թափուր տեղը: Ինչ եք կարծում, ո՞վ զբաղեցրեց այդ տեղը: Շատ ավելի լուրջ եւ ծանրակշիռ կարգավիճակով անձնավորություն՝ **Վլադիմիր Կոլոկոլցեւը**՝ ՌԴ Ներքին գործերի նախարարը:

Իսկ Կոլոկոլցեւի որդին դարձավ Նիսանովի բարեկամ **Օլեգ Յունուսովի** գործընկերը «Իլ ֆորնո» ռեստորանում:

2016թ. «Եվրոպեյսկի» առեւտրի կենտրոնի (նույնպես պատկանում է Նիսանովին) տնօրեն դարձավ **Թեյմուր Բյուլ-Բյուլ Փոլադ օղլին**՝ երաժիշտ, ՌԴ-ում Ադրբեջանի դեսպան Բյուլ-Բյուլ Փոլադի որդին: Չմոռանանք ընդգծել, որ Գոդ Նիսանովը եւ դեսպանը մտերիմ ընկերներ են: Նիսանովն իր ընկերություններից մեկում բարձր եկամուտով աշխատանք է հատկացրել նաեւ «Ռոսկոսմոս»-ի ղեկավար **Դմիտրի Ռոգոզինի** որդուն:



«Նիսանովն անզուսպ կիրք ունի առեւտրի կենտրոնների նկատմամբ», այսպես է նրա մասին արտահայտվում մեկ ուրիշ հայտնի գործարար **Իլգար Հաջիեւը**: Նիսանովն այն աստիճանի կապված է իր «Եվրոպեյսկի» առեւտրի կենտրոնի հետ, որ շինության 5-րդ հարկում ունի մի շքեղ առանձնասենյակ: Այդ առանձնասենյակին կից կառուցվել է լողավազան, բաղնիք, մերսման եւ եղունգների մշակման սենյակներ: Իհարկե, այս բոլոր պայմանները մատչելի են ոչ միայն Նիսանովի, այլ նրա առանձնահատուկ մտերիմ բարեկամների համար:

Ընթերցողս հիմա կմտածի՝ մի՞թե այդքան կարեւոր է՝ լողավազան կա այդտեղ, թե ոչ: Այո, լողավազանն առանձնապես կարեւոր շինություն չէ, բայց կարեւոր է, թե ովքեր են այցելում այդ մասնավոր լողավազանը: Նշենք այցելողներից մեկին: Այդ մասնավոր, բայց հարմարավետ լողավազան այցելում է Ռուսաստանի Դաշնության Արտաքին հետախուզության պետ **Սերգեյ Նարիշկինը**, որն ամենօրյա մրցալողի խիստ կարիք ունի: Որպես կանոն, գլխավոր հետախույզը առեւտրի կենտրոն է ժամանում ամեն օր եւ նույն ժամին: Լողավազանում նա անցկացնում է մոտ 1 ժամ:

Ականատեսների պնդումով Նարիշկինին «Եվրոպեյսկի» առեւտրի կենտրոնի ավտոկանգառում միշտ դիմավորում է մի անձնավորություն, որը ժամանում է նրանից մի քիչ շուտ, «ԲՄՎ» մակնիշի, Ադրբեջանի դեսպանատան համարանիշով մեքենայով:

Այդ խորհրդավոր անձնավորությունը, որը երբեք չի ուշանում եւ միշտ ուղեկցում է Նարիշկինին՝ **Էլման Բայրամովն** է, Գոդ Նիսանովի ամենամտերիմ գործընկերներից մեկը: Բայրամովը հանդիսանում է «Մոսագերվին» գործարանի սեփականատերը: Նրա գործարանը թողարկում է կոնյակ, պորտվեյն եւ օղի: Բացի այդ, Բայրամովը Ադրբեջանի առաջին փոխվարչապետ **Յաղուբ Էյուբովի** հետ խնամիական հարաբերություններ ունի, նրա դուստրը ամուսնացած է Էյուբովի որդու հետ: Հենց վերոհիշյալ Բայրամովն է ծանոթացրել Նարիշկինին Նիսանովի հետ:

Սերգեյ Նարիշկինին «ծառայություններ մատուցելը» չի սահմանափակվում միայն լողավազանով կամ մրցալողից հետո թեթեւ նախաճաշով. հետախուզության պետի ընտանիքի անդամները հաճախ օգտվում են Նիսանովի այլ «բոնուսներից», օրինակ՝ ուղեւորություններ են կատարվում Նիսանովի բիզնես-ջեթով (Gulf stream-G65 մակնիշի ինքնաթիռով): Նարիշկինի դուստրը **Վերոնիկան** հաճախ է այդ ինքնաթիռով ուղեւորվում տարբեր երկրներ, այդ թվում եւ Բաքու: 30-ամյա Վերոնիկան լողի գծով սպորտի վարպետ է եւ աշխատում է Նիսանովի «Սիգմա Ինվեստիցիոն խմբում»՝ որպես կառավարիչ: Միեւնույն ժամանակ Վերոնիկա Նարիշկինան մտերմիկ հարաբերություններ ունի **Իլհամ Ալիեւի** դուստր՝ **Լեյլայի** հետ եւ նրանք հաճախ հանդիպում են Նիսանովին պատկանող «Radisson նավակազմ»-ի նավերից մեկի վրա:

Գոդ Նիսանովի գործարար եւ բարեկամական կապերի մասին Ռուսաստանում, Ադրբեջանում, ԱՊՀ այլ երկրներում կարելի է անվերջ խոսել եւ թվարկել, բայց չէ՞ որ իսկական գործարարը այլ կերպ չի էլ կարող, այդ թվում եւ հայ գործարարները Հայաստանում ու Ռուսաստանում:

Խնդրի էությունը նրանում է, թե այդ կապերը ինչքանո՞վ են օգտագործվում մեծ քաղաքականության մեջ, ռազմավարական ոլորտներում, ի՞նչ աստիճանի կախվածություն ունի քաղաքական, կարեւոր, վճռող դիրք ունեցող գործիչը այդ գործակալից: Որպես կանոն կախվածությունը երկկողմանի է, քանի դեռ մեկն ունի վճռող ազդեցիկ դիրք, իսկ մյուսը՝ անսահմանափակ ֆինանսա-տնտեսական եւ կենցաղսպասարկման հնարավորություններ: Դա է այսօրվա բարոյական կոդեքսը, կյանքի վարքականոնը գրեթե բոլոր հասարակություններում:

Ես իհարկե հեռու եմ այն մտքից, որ Նարիշկինը կամ նրանից ավելի բարձր կարգավիճակ ունեցող քաղաքական գործիչներն իրավունք չունեն ընկերություն անել ադրբեջանցի գործարարների կամ դեսպանների հետ: Առավել եւս, ո՞վ իրավունք ունի նրանց ասել լողացեք ոչ թե Նիսանովի լողավազանում, այլ Յասենովոյում տեղաբաշխված Արտաքին հետախուզության ծառայության վարչության շենքի լողավազանում, որը բավականին հարմարավետ է, որտեղ ժամանակին լողում էր նախորդ տնօրեն **Միխայիլ Ֆրադկովը** եւ շատ բարձրաստիճան գեներալներ եւ գնդապետներ:

Եվ ո՞վ ասաց, որ Վերոնիկա Նարիշկինան չի կարող ընկերություն անել Լեյլա Ալիեւայի հետ. մենք գիտենք դեպքեր, երբ ընկերության ձեռքեր են մեկնվում նաեւ անձամբ Մեհրիբան Ալիեւային: Եվ դա վատ չի, եթե արվում է ճիշտ ժամանակին, ճիշտ տեղում, ճիշտ միջավայրում եւ ոչ թե չմտածված պոպուլիզմի նպատակով, այլ հեռու քայլող ռազմավարական-քաղաքական նպատակներով:

Եվ այսպես՝ փաստեր, որ Նիսանովը օգտագործել է իր կապերը Նարիշկինը հետ հօգուտ Ադրբեջանի ռազմա-քաղաքական հաղթանակների, չկան, եւ որտեղի՞ց կամ էլ ո՞վ պիտի ձեռք բերեր այդ փաստերը, ո՞վ ուներ այդ համարձակությունը, պրոֆեսիոնալ հնարավորությունները, էլ չխոսենք մի շարք այլ օպերատիվ մանրամասնությունների մասին:

Չի բացառվում, որ Նարիշկինը իր պրոֆեսիոնալ պարտքը կատարում է ազնվորեն, առանց խոցելի արատների, նույնիսկ եթե հայ-ադրբեջանական վերջին դաժան պատերազմի ժամանակ նա շարունակել է իր ամենօրյա մրցալողերը Նիսանովի լողավազանում: Դե պարզ է, հո նա, Նիսանովը, կամ Վերոնիկան ազգի մեջ չէին մտնելու, կամ վատ տրամադրության պատճառով հրաժարվեին իրենց «պարտադիր» օրակարգից:

Ես չեմ կարող նույնիսկ պնդել, որ Նիսանովը բացի իր գործարարությունից զբաղվում է հետախուզական աշխատանքով հօգուտ Ռուսաստանի կամ Ադրբեջանի, սակայն լավ իմանալով թուրք-ադրբեջանական հետախուզության անվրեպ եւ նպատակասլաց աշխատաոճը՝ չեմ բացառում ոչ մի բան:

Ես առիթներ ունեցել եմ արդեն ընթերցողիս ներկայացնել, թե ի՞նչ բան է հետախուզությունը կամ հատուկ ծառայությունները ընդհանրապես:

Հիմա օգտվելով առիթից հիշեցնեմ, թե ի՞նչ բան է ռուսական հետախուզությունը, գուցե դա պետք գա համապատասխան գործիչներին եւ ոլորտներին:

Քաղաքական հետախուզության պետը, ի տարբերություն այլ ուժային կառույցների ղեկավարների, գործնականում աննկատելի անձնավորություն պետք է լինի:

Բայց նա ամեն առավոտ զեկուցում է պետության ղեկավարին ընթացիկ հետախուզական ամփոփագրի ձեւով, մի քանի էջի վրա: Այդպես է Ռուսաստանում եւ գրեթե ամբողջ աշխարհում (չնչին բացառություններով): Այդ ամփոփագրում, եթե խոսքը վերաբերում է գերտերությանը, նշվում են կարեւոր գեոքաղաքական, ռազմական, տնտեսական, գիտահետազոտական եւ այլ նորույթների մասին ամբողջ աշխարհում: Եթե այն տարածաշրջանային փոքր պետություն է, ապա պարզ է, որ ամփոփագիրը ընդգրկում է խիստ տարածաշրջանային եւ կոնկրետ իրենց պետության շահերին վերաբերող խնդիրները:

Այնուհետեւ օրվա ընթացքում պետության գլուխը հետախուզությունից ստանում է հրատապ տեղեկատվություններ, անկախ նրանից, թե այդ օրն ինչպես է նա իրեն զգում, ինչ աշխատանքային օրակարգ ունի, աշխատավայրում է, թե՞ ինքնաթիռում:

Որպես կանոն Սերգեյ Նարիշկինը, որը ղեկավարում է ռուսական հետախուզությունը 2016թ. նոյեմբերի 5-ից, շաբաթը առնվազն մեկ անգամ ժամանում է Կրեմլ եւ անձամբ զեկուցում է Վլ. Պուտինին, թե ի՞նչ է կատարվում աշխարհում (այդ թվում եւ Հայաստանում իհարկե), ինչպես է գնահատում հետախուզությունն այս կամ այն իրադարձությունները եւ իրենց կարծիքը, թե ինչ է պետք անել այս կամ այն օպերատիվ-քաղաքական իրավիճակում:

Հետախուզությունն աշխատում է օրվա 24 ժամ, այդ աշխատանքն ընդմիջումներ չի ունենում: Տեղեկատվությունները ձեռք են բերվում հեռախոսային խոսակցությունների, էլեկտրոնային փոստի, ռադիոէլեկտրոնային ալիքակալումների միջոցով, գործակալական ցանցից, բաց տեղեկատվական աղբյուրներից, օտարերկրյա հեռուստահաղորդումներից, համացանցից եւ իհարկե ամենակարեւորը՝ ճիշտ վերլուծություններից:

Հետախուզության տնօրենը կարող է հանձնարարել իր վերլուծաբաններին կամ կոնկրետ ուղղության օպերատիվ կազմին տեղեկանք ներկայացնել այս կամ այն թեմայով՝ համապատասխան կանխատեսումներով եւ ստանալ այն հաշված րոպեների ընթացքում, քանի որ հումքն արդեն պատրաստ վիճակում է:

Դետեկտիվ վեպերի սիրահարներին հայտնեմ ոչ մեծ գաղտնիք. Սերգեյ Նարիշկինը հետախուզության շենքում զբաղեցնում է թիվ 2131 առանձնասենյակը, 3-րդ հարկում: Նրան նախորդողներն էին Մորշինը, Կրյուչկովը, Շեբարշինը, Պրիմակովը, Տրուբնիկովը, Լեբեդեւը եւ Ֆրադկովը:

# «Պարոն Ալիեւ, Դուք հաղթեցիք պատերազմը, բայց հաղթող չդարձաք».

## Արա Աբրահամյան

«Անցել է գրեթե երկու ամիս, ինչ Դուք թուրքական բանակի եւ իսլամական գրոհայինների աջակցությամբ եւ բոլոր տեսակի զենքերի (ներառյալ միջազգային կոնվենցիաներով արգելված կասետային եւ ֆոսֆորային ռումբեր ` խաղաղ բնակչության դեմ) կիրառմամբ, «լուծել եք» ղարաբաղյան հիմնախնդիրը: Բայց այս հարցի «լուծումը» տարածաշրջանին խաղաղություն չի բերել: Չգիտես ինչու, Դուք այս մասին չեք ասում ձեր ժողովրդին:

Այն վարքագիծը, որն ընտրել եք եռակողմ հայտարարության ստորագրումից հետո, ցավոք` մեծ վտանգ է պարունակում եւ դանդաղ ազդեցության ական է դնում տարածաշրջանային անվտանգության համակարգի տակ, ինչը գրեթե անհնար է դարձնում երկու ժողովուրդների համատեղ կյանքը:

Այսօր ցուցադրաբար «ճնշելով» եւ ոտնահարելով հայերի պատիվն ու արժանապատվությունը` Դուք ամեն ինչ անում եք, որպեսզի վաղ, թե ուշ մեր ժողովուրդները կրկին բախվեն ռազմի դաշտում:

Միաժամանակ ադրբեջանցիների հետ հայերի համակեցության առասպելական հեռանկարների մասին խոսումներին զուգահեռ, Աֆղանստանի ներկայացուցչի հետ հանդիպման ժամանակ Դուք դիմում եք աշխարհի մահմեդականներին ` փորձելով նրանց հայերի դեմ տրամադրել: Հայերի, որոնք անհիշելի ժամանակներից ապրել են աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում ` իսլամական պետություններում, եւ բոլոր ժամանակներում իրենց տաղանդի, նվիրվածության եւ ստեղծագործական աշխատանքի շնորհիվ վայելել եւ վայելում են արժանի հարգանք: Այս մասին ձեզ կասեն Իրանի եւ Սիրիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների եւ Սուդանի, Քուվեյթի, Եգիպտոսի, Իրաքի եւ շատ այլ երկրների ե՛ւ առաջնորդները, ե՛ւ շարքային քաղաքացիները, որոնց փորձում եք պարտադրել ձեր հայատյաց քաղաքականությունը` արհեստականորեն բորբոքելով կրոնական կրքեր:

Բազմաթիվ երկրներում հայերի ժառանգությունն այնքան նշանակալի է, ինչպես, օրինակ, Թուրքիայում, որ հայերի ստեղծած ճարտարապետական եւ մշակութային գլուխգործոցները մինչ օրս այդ երկրի այցեքարտն են: Իրենց աշխատանքով Բաքուն փառավորել են հայ արդյունաբերողներ, բժիշկներ եւ ճարտարագետներ, գիտնականներ եւ շինարարներ:

Բայց դժվար թե հարյուր տարի առաջ Բաքվի նավթահանքերը ստեղծած Գյուլբենկյանը կամ Մանթաշովը կարող էին ենթադրել, որ Դուք, պարոն Ալիեւ, այս մեծ հովանավորներին հակառակ, նավթի արդյունահանումից ստացված գումարը կօգտագործեիք ոչ թե բարի գործերի, այլ նրանց սերունդների ոչնչացման համար: Հայ քաջարի մարշալների եւ Հայրենական մեծ պատերազմի շարքային զինծառայողների սերունդների, որոնց անուններն ու ազգանունները «մոռանում եք» նշել ամեն անգամ, երբ հպարտորեն նշում եք Ադրբեջանի ԽՍՀ-ից Խորհրդային Միության հերոսների թիվը:

Պարոն Ալիեւ, Ձեզ հաղթող համարելով` ձեզ հաղթողի պես պահեք:

Սեղմեք «ստոպ» կոճակը: Դադարեցրեք քաղաքական վանդալիզմը եւ Ձեր ենթակաների բարբարոսությունը, որոնք ծաղրում են հայ ռազմագերիներին եւ խաղաղ բնակիչներին, սոցիալական ցանցերում տեղադրում են պատանդ վերցված ռազմագերիների եւ խաղաղ բնակիչների, ներառյալ տարեց անօգնական մարդկանց նկատմամբ անմարդկային վերաբերմունքի մանրամասները:

Քաղաքակիրթ մարդկության մաս դառնալու ցանկության մասին Ձեր խոսքերը գեղեցիկ են թվում, բայց Ձեր գործերը, ցավոք, արտահայտիչ կերպով վկայում են հակառակի մասին. պատմությունը վերաշարադրելու եւ այն հողերում հայերից ազատվելու մասին, որտեղ դարերով ապրել եւ արարել են մեր նախնիները, ինչպես դա արել եք Նախիջեւանում, որտեղ այսօր ոչ միայն հայ բնակչություն, այլ նաեւ հայկական եկեղեցիներ, հուշարձաններ ու գերեզմաններ չեն մնացել:

Այսօր ընտրություն կատարելով հօգուտ Ադրբեջանի վրա թուրքական վասալիտետ հաստատելու եւ Ձեր երկիրը տարածաշրջանում նոր ահաբեկչական հենակետ դարձնելու` Դուք այլ մատրիցա եք պարտադրել Ձեր քաղաքացիներին, եւ այժմ նրանք ստիպված կլինեն ապրել այլ իրականության մեջ:

Եվ Ձեր կողմից ստեղծված այս վտանգավոր իրողությունը, ցավոք, ադրբեջանցի ժողովրդին հնարավորություն չի թողնում խուսափելու նոր պատերազմից:

Պատերազմ, որը տեղի է ունենալու վաղ թե ուշ, եւ այդ ժամանակ դուք այլեւս չեք հիշվի որպես հաղթող: Ի վերջո, պետք է կարողանալ ոչ միայն պարտվել, այլեւ հաղթել: Իսկ դուք, հաղթելով պատերազմում, այդպես էլ հաղթող չդարձաք»:

**23 դեկտեմբեր, 2020**

# Բաժանիր, որ... տիրես




**ՆԱԻՐ ՅԱՆ**

Արցախի սահմանազատումների հարցը չլուծած` սահուն անցանք Հայաստանին: Սկզբունքը նույնն է` քար անտարբերություն, ամենաթողություն իշխանությունների կողմից, թշնամու սանձազերծված ոտնձգություններ հայ գյուղացու, հայի հողի նկատմամբ եւ անպատժելիություն: Համացանցը ողողված է տարբեր ժամանակների քարտեզներով: Մարդիկ տարակուսած հարցնում են` ի վերջո, ո՞ր քարտեզի հիման վրա են Հայաստանի սահմանները վերաձեւվում ու բզկտվում, ո՞վ է պատասխան տալու եւ բացատրելու, թե իրավական ի՞նչ փաստաթղթի հիման վրա է սահմանազատումը կատարվում: Քարվաճառից, Բերձորից, Աղավնոյից, Սոթքից դեռ չպրծած` անցանք Սյունիքին, ինչը եւ կանխատեսվում էր: Ոչ մի պատկան մարմին որեւէ ամբիոնից չհայտասարեց, թե ինչ ակնկալենք, ինչին սպասենք առաջիկայում, միայն բոլորս վստահ էինք, որ սահմանազատումները սարսափելի ցավոտ ու ողբալի են լինելու: Ադրբեջանցիները Սյունիքի Որոտան գյուղ են մտել, գյուղացուն ահաբեկել, թե մի ժամից դուրս կգաս տանից, հակառակ դեպքում...

Հայտնի չէ Խնձորեսկի, Դավիթ-Բեկի, Շուռնուխի ճակատագիրը(*): «Դուրս եկեք ձեր տներից, լքեք գյուղը, մինչեւ սահմանազատումը կավարտվի, հետո կպարզվի` գյուղը ձե՞զ է մնում, թե՞ ադրբեջանցիներին, կամ տան կեսը տանտիրոջը կմնա, մյուս կեսը` ադրբեջանցուն, ո՞վ գիտե. անտեր, անթիկունք, անղեկավար երկիր է»,- բողոքում են սյունեցիները:

Իսկ իմքայլական պատգամավորը ոչ ավել, ոչ պակաս հայտարարում է, թե Սյունիքից ոչ մի սանտիմետր հող չի անցնելու Ադրբեջանին. իմացած լինեք, որ Որոտանի վարելահողերը մինչեւ հիմա գտնվելիս են եղել այլ պետության տարածքում: Հետաքրքրական է` Կարեն Համբարձումյան անունով սիսիանցի պատգամավորն այսպես խոսելիս ինքն իր ձայնը լսե՞լ է` «գտնվելիս են եղել այլ պետության տարածքում»: «Այլ պետության» անունն էլ չի նշում, իբր դե գլխի ընկեք էլի, պարզ չէ՞, որ խոսքը Թաիլանդի մասին չէ:

Եթե Հայաստանի Հանրապետության իշխանական կուսակցության ներկայացուցիչն է «հաստատում», թե Որոտան գյուղի մի մասը` այն էլ վարելահողերը, մինչեւ հիմա Ադրբեջանի տարածքում են եղել, ադրբեջանցիներից էլ ի՞նչ նեղանանք: Ուրեմն վարելահողերը պետք է տանք ադրբեջանցիներին, ասել է թե գյուղացին պիտի իր պապենական տանն ապրի, բայց գյուղի հողերը մշակի, բերք ու բարիքն ստանա ադրբեջանցին. սա բնական ու բարոյական է, ազնիվ ու արդար է` ըստ իմքայլականի:

Հայաթափում. մեր օրերում հայաստանյան իշխանությունների ձեռքով իրականացվում է Արցախի ու Հայաստանի հայաթափման մեծ ծրագիր: Եթե գյուղացուն ասվում է` մի քանի ժամում տունուտեղդ լքիր, հետո կերեւա` կվերադառնա՞ս գյուղ, թե՞ ոչ` կախված սահմանազատման սուրբ ու ադրբեջանամետ գործընթացից, ուրեմն ի՞նչ երաշխիքի մասին է խոսքը, որ գյուղացին երբեւէ կվերադառնա իր տուն, եթե նույնիսկ այն չհանձնվի ադրբեջանցուն: Քանոնով գծված սահմանի այս կողմում ադրբեջանցին ապրի, այն կողմում` հայը: Սա Ֆրանսիա-Բելգիա սահմանը չէ, քանոնով գծված սահմանի այն կողմում արնախում, հայի կյանքի ծարավ թուրքն է, որի հետ խաղաղ գոյակցելն աբսուրդի ժանրից է: Որքան էլ իշխանություններն իրենց անմեղսունակ հայտարարություններում հայ-թուրքական «բարեկամության» մասին անթաքույց ու թաքնված կոչեր անեն, իրենք էլ քաջ գիտակցում են, որ թուրքի հետ համատեղ կյանք վարելն անհնար է: Ուրեմն այս ամենը մի բան է ենթադրում` երեկ` Վարդենիսի ու Բերձորի, այսօր` Սյունիքի, իսկ վաղը` Տավուշի ու միայն սատանային է հայտնի, թե էլի որ շրջանների գյուղերի հայաթափում է սպասվում: Հայաթափում ու հանձնում թուրքին:

Ո՞ր փաստաթղթի հիման վրա է հիմա կատարվում ժամանակավոր, իսկ արդեն հունվարին` վերջնական սահմանազատումը: Ո՞վ է այն ստորագրել եւ ո՞ւմ հետ է համաձայնեցրել, եթե մարզպետը, գյուղապետերը, բնակիչները տեղյակ չեն, եթե լույսը բացվում է, ու մինչեւ ատամները զինված ադրբեջանցին հայ գյուղացու տուն է մտնում ու սպառնում` դուրս արի, թե չէ կսպանենք, իսկ Հայաստանի սահմաններն օր օրի նեղանում, սեղմվում ու բզկտվում են:

Գեոդեզիստներից, քարտեզագետներից ու քարտեզագիրներից կազմված երիտասարդ մասնագետների մի խումբ դեռ քառասուն օր առաջ է իշխանական տարբեր կառույցներին նամակ ու առաջարկ ուղարկել` ստեղծել առանձին մասնագիտական հանձնաժողով, որի ուսումնասիրությունների արդյունքում միայն կկատարվեն սահմանազատումները: Հանձնաժողովը պետք է ներկա լինի սահմանազատման, չափագրման գործընթացին, բանակցի ադրբեջանցիների հետ, միջազգային կոնվենցիաների, փաստաթղթերի, քարտեզների հիման վրա պնդի, որ միջպետական սահմանների այսօրինակ ամրագրումը քրեորեն պատժելի է, հանցանք, անթույլատրելի: Ի վերջո, մինչեւ հիմա ոչ մի կետով, ոչ մի գործողությամբ հայկական կողմի շահերը պաշտպանված, անգամ հաշվի առնված չեն: Կոնֆետ, խնձոր, փող չի բաժանվում, հայրենիք է բաժանվում, պետություն է կազմաքանդվում, ազգ է վերանում, ապագա է կործանվում:

Նախաձեռնող խումբը նաեւ պնդում է, որ պետք է հատուկ սարքավորումների օգնությամբ կատարել սահմանազատումները: Հիմարին էլ պարզ է, որ GPS-ով ու սովետական քարտեզով սահմանազատում անելը նշանակում է Հայաստանը նվիրել Ադրբեջանին, Հայաստանը հայաթափել ու բավարարել ադրբեջանցու ցանկացած քմահաճույք ու ոտնձգություն:

Երիտասարդ մասնագետներն իրենց առաջարկները ներկայացրել են նաեւ Նիկոլ Փաշինյանին ու ստացել կարճ-կոնկրետ պատասխան` ձեր կարիքը մենք չունենք, մենք գիտենք` ինչ ենք անում, մեր մասնագետները լիուլի բավարարում են մեզ:

Իր հասակից հազար մետր բարձր ամբիցիաներ ունեցողն ինչպե՞ս կարող է այլ մասնագետի կարծիք լսել. թքած, թե հայրենիք չենք կորցնում, ինքնություն չենք կորցնում, պետություն չենք կորցնում:

Եթե ձեր նպատակը ծրագրված կերպով Հայաստանը թուրքին հանձնելը չէ, ուրեմն դուք պատրաստ կլինեիք լսել մասնագիտական խորհուրդներն ու առաջարկները: Չեք լսում, քանի որ ամեն բան նախապես պայմանավորված ու հաստատված է:

Հայաստանի Հանրապետությունը մենք քեզնից կամ քո պապից չենք ժառանգություն ստացել, Փաշինյան: Հայաստանի Հանրապետության պետականության կառուցման գործում դու կես գրոշի, կես գաղափարի ներդրում չունես, բայց արի ու տես, որ սատանայի կամոք այսօր դու ես որոշում հազարամյա երկրի, հայի հայրենիքի ճակատագիրն ու բախտը: Հենց սա է ամենաողբալին: Հիմարին էլ պարզ է, որ եռակողմ համաձայնագիր կոչված թղթից բացի, որի` քո ստորագրությամբ տարբերակն այդպես էլ ոչ ոք չտեսավ, դու ուրիշ դավեր էլ ես նյութել` Հայաստանը մաս-մաս հանձնելու, Հայաստանը հոշոտելու, ծվեն-ծվեն անելու ազգադավ ծրագիր:

_(*) Երեկ այս գյուղ մտած ազերիները պահանջում էին հայապատկան 13 տուն հանձնել իրենց:_ **Ծ.Խ.:**

# Անցնող տարին եւ մենք

⇨1 Մեր հասարակությունը երկուսուկես տարի առաջ ոչ թե հանուն, այլ ընդդեմ սկզբունքով իշխանափոխություն «իրականացրեց» եւ խաղում է ժողովրդավարության դաշտում: Իսկ նշանավոր մտավորական Հայկ Ասատրյանի բնորոշմամբ «Դեմոկրատիզմը (ժողովրդավարությունը) մտածումի անսկզբունքություն է, բոլշեւիզմը՝ բարոյական կյանքի»: Սակայն երկուսն էլ չեն խոստանում հոգու, բանականության, սրտի, կամքի, բարոյական զգացումի ներդաշնակություն, դրանով էլ՝ անհատի եւ հասարակության, ազգի եւ պետության, ժողովրդի եւ դասակարգի օրգանական միություն («Տարոնի Արծիվ», 1939թ., թիվ 10): Մեր համար պարզ պիտի լինի, որ այդ հակասությունները վերացնելու եւ օրգանապես միացյալ ազգություն եւ պետություն ստեղծելու ձգտում ունի ազգայնականությունը: Ազգն է դավանում ազգային ոգու հավիտենականությանը, եւ պատմություն, մշակույթ, պետություն եւ այլն համարվում են նրա հայտնությունը: Վստահաբար նորմալ ժողովուրդների մոտ ամեն ինչ ստորադասվում է ազգի հավիտենականին եւ դրանով ստեղծվում է հավիտենանպատակ՝ ամբողջական ազգային հասարակությունը եւ նրանց համար ազգն է բոլորի ճակատագիրը, եւ բոլորը գործում են հանուն նրա:

1990-ական թթ. այդ մտայնությամբ էր առաջնորդվում իմ սերունդը, որը կարդացած էր, պատմություն գիտեր, արվեստ էր սիրում, առողջ էր ու կոփված, ուստի բոլորովին էլ պատահական չէր, որ անկախություն վերանվաճեց ու արցախյան հերոսամարտում հաղթեց: Նա գիտեր, որ Վաթեռլոյի ճակատագրական, վճռորոշ ճակատամարտում, երբ Բլյուխերն արդեն թարմ ուժեր էր նետել ռազմի դաշտ, ու Նապոլեոնի պարտությունը կասկած չէր հարուցում, քանի որ նրա գվարդիան ընկավ շրջափակման մեջ: Անգլիացիները հիացմունքով էին նայում, թե ինչպես են կռվում փրկության ոչ մի շանս չունեցող իրենց կատաղի հակառակորդները: Եվ անգամ այդ արյունոտ պահին նրանցից շատերը գոռում էին՝ հանձնվեք, քաջե՛ր: Ու Նապոլեոնի հավատարիմ գեներալ Կամբրոնը, որի անունը ոսկյա տառերով է գրվել ֆրանսիական զենքի պատմության մեջ, ինչպես Հյուգոն էր նկարագրում, ատամների արանքից զզվանքով նետում է՝ գվարդիան մեռնում է, բայց չի հանձնվում: Այդ ճակատամարտից անցել են հարյուրավոր տարիներ, բայց աշխարհի բոլոր ժողովուրդները գիտեն քաջերի քաջի այս թեւավոր արտահայտությունը:

Իմ արդեն ճերմակամազ սերունդն ապեց, որ 2020-ի նոյեմբերի 13-ին՝ խայտառակ կապիտուլյացիայից հետո, մի խումբ մարդիկ, որոնց մեջ կային նաեւ հայտնի դաշտային հրամանատարներ, կառավարության դիմաց գերագույն գլխավոր հրամանատարին ստորացուցիչ պարտության համար շնորհակալություն հայտնեցին: Վստահ եմ, սա էլ են հիշելու սերունդները, սրա մասին էլ է գրքեր գրվելու...Եվ սա թողած, այսօր վիճում են, եթե պատերազմն անխուսափելի էր, ապա հնարավոր էր ավելի պատշաճ պատրաստվել դրան: Այնինչ, մեր ազգընտիրների ղեկավարությամբ հասանք մի իրավիճակի, երբ հասարակությունը, բանակն ու արտաքին դաշնակիցների հետ հարաբերությունները գտնվում էին ամենավատ, ամենաանպատրաստ վիճակում: Դա դեռ բավական չէր, իշխանությունն այսօր իրեն ենթակա քարոզչամեքենաների միջոցով տարածում է «մեր պարտության պատճառը Մոնումենտի դոյակներն են», որ «Հայաստանը փակել է 80-ականների զենքի ամոթալի էջը», որ Ադրբեջանն այլեւս չի կարող ՀՀ-ի հետ ուժի լեզվով խոսել եւ այլ թեզերը: Սրան պետք է գումարել ՍՈՒ-երի, ՕՍԱ-ԱԿԱ-ների՝ հարյուրավոր միլիոն դոլարների գնումները, որոնք այս պատերազմի ընթացքում ունեցան զրո նշանակություն: Այսօր ակնհայտ է դառնում, որ քաղաքական ղեկավարության՝ բանակի բարեփոխումների մասին վերամբարձ հայտարարությունները սկսել են ու վերջացել բանակին ելակ մատակարարելու հաճելի, բայց պատերազմի ժամանակ զրո նշանակություն ունեցող գործընթացով:

Ավելին, արտաքին խաղացողների հետ հարաբերությունների զրոյացմանն էր խոսքը վերաբերում, մինչդեռ ամենի ինչ իրականում հակառակն էր արվում: Իսկ ամենավտանգավորն այն էր, որ Հայաստանում քաղաքական ամենաբարձր էշելոնում հակառուսական տարրերի առկայությունն օրեցօր ավելի ու ավելի ակնհայտ էին դառնում: Անթաքույց կերպով՝ հեղափոխությունից հետո ՀՀ-ում բանալի ոլորտների ղեկավարներ նշանակվեցին մարդիկ, որոնք իրենց կյանքի գերագույն հատվածը նվիրել էին ՌԴ դեսպանության դիմաց ակցիաներ անելուն ու հակառուսական կոչեր հնչեցնելուն: Այսօր էլ կառավարությունում, խորհրդարանում կան բազմաթիվ մարդիկ, որոնք որքան էլ փորձում են իրենց ներկայացնել Մոսկվայի հետ հարաբերությունների ջատագովներ, շարունակում են լինել հակառուսականության ջահակիրներ: Պատերազմի ժամանակ էլ պարբերաբար տեղեկատվություն էր տարածվում, թե հեսա պարսիկները կխփեն Ջաբրայիլի ու Զանգելանի կողմից՝ էնտեղ ահաբեկիչներ են տեղակայվել, որոնց Թեհրանը չի կարող հանդուրժել: Այնինչ պարսիկները ոչ միայն չխփեցին, այլ ամենաբարձր մակարդակով առնվազն ադրբեջանամետ հայտարարություններ արեցին: Այստեղ է, որ ակամա հարց է առաջանում, լավ իմանալով Իրանի վերաբերմունքը դրան, արդյո՞ք մեզ պետք էր պատերազմից առաջ Իսրայելում դեսպանություն բացել: Կամ մեկ այլ իրողություն. անգլոսաքսոնական համակարգը մեր երկրում մոտ 600 մլն դոլար էր ներդրել՝ Ամուլսարի հանքի շահագործման համար: ՀՀ-ի հեղափոխական կառավարությունը 2.5 տարվա մեջ վախենալով ֆեյսբուքյան **դիսլայքերից**՝ իր մեջ ուժ չգտավ լուծելու այս խնդիրը: Հետեւանքը՝ ԱՄՆ-ի ու իր դաշնակիցների կրավորական պահվածքն էր այն ժամանակ, երբ Հադրութում հայ ծերունու ականջ էին կտրում: Էս շարքը կարելի է շարունակել...

Բայց այսօր մեր հասարակությանն անհրաժեշտ է ու կարեւոր օր առաջ ձերբազատվել նախ՝ «փրկչի» բարդույթից, քանի որ դեռեւս նախորդ իշխողների կողմից մատուցվող այլընտրանք չտեսնելու բարդույթը հունից հանել եւ միաժամանակ բթացրել էր հասարակությանը, որից էլ ցասումը հասցրեց նրան, որ հասարակությունը գնաց կառավարման հմտություններից բացարձակապես զուրկ մեկ այլ «փրկչի» հետեւից: Գարեգին Նժդեհն ասում էր, որ կենսաբանական անբարոյականը պատմության մեջ շատ հաճախ ղեկավարվում է խոյի հոգեբանությամբ, եւ բարոյապես տկար հոտն էլ՝ ոչխարի պես հետեւում է նրան: Իսկ նմանն ընդունակ է ատել իր ցեղի Աստծուն, ներել իր դահիճին եւ սիրել նրան: Ժամանակին ՀՀԿ-ն պարտավոր էր այլընտրանք ունենալ եւ եթե իրոք չուներ, ապա դա նրա մեծագույն ձախողումներից մեկն էր: Այս օրերին էլ է հասարակությանը նույն սցենարը մատուցվում: «Փրկիչը» միակն է, իսկ այլընտրանքը՝ հին «փրկիչը», արդեն մերժվել է: Այնպես որ իբրեւ թե այլ ելք չկա եւ ստիպված պետք է ապավինենք գործող «փրկչին»: Այսինքն՝ չկողմնորոշվող, ամեն ինչից հուսահատ զանգվածները դարձյալ կանգ են առնում գործող կամ մերժված «փրկչի» վրա: Կարծում եմ, հայ ժողովուրդը դեռ այդքան չի այլասերվել, որ այսքան սահմանափակվի նրա լուրջ խորհելու, ինքնակազմակերպվելու, ընտրություն եւ փրկություն գտնելու հնարավորությունը: Այլընտրանք չունենալու թեզը հերթական ինքնանվաստացումն է: Մենք պարտավոր ենք ձերբազատվել «փրկչի» բարդույթից եւ ինքներս մեզ փրկենք: Ճիշտ այլընտրանք միշտ էլ եղել է, եւ հիմա էլ կա....

Պակաս կարեւոր չէ, որ պիտի սովորենք հարցնել ու պահանջել այս կամ այն որոշման կամ գաղափարի-ծրագրի գինը, թե՝ ով է վճարելու այդ գինը, ինչպե՞ս եւ ինչո՞վ: Որպեսզի իմանանք մեր վճարելիքը ու հասկանանք՝ ընդունելի՞ է մեզ համար այն, թե՞ ոչ: Որպեսզի ճշտելու եւ որոշման վրա ազդելու հնարավորություն ունենանք: Որովհետեւ գոնե սրանից հետո յուրաքանչյուր գաղափար պիտի ենթադրի հստակ պատասխանատվություն, ընդ որում՝ կոնկրետ-հասցեական պատասխանատվություն, որը կարողանանք վերջապես դուրս բերել հայրենասիրության, պաթոսի, հերոս-դավաճանի տիրույթից եւ տանել իրավունքի-պարտականության, արդարության դաշտ: Հասկանում եմ, որ դժվար է լինելու, որ արմատական-հոգեկերտվածքային-արժեհամակարգային փոփոխություններն առաջինն իրականացնողները կամիկաձեներ են լինելու ու դառնալու են հերոս-դավաճան գաղափարաբանության առաջին զոհերը: Պարզ է նաեւ, որ ներքին այս աղետալի միջավայրից զատ արտաքին միջավայրն էլ բարենպաստ չէ: Պարզ է նաեւ, որ փնտրողը միշտ որեւէ ճանապարհ անպայման կգտնի:

Գաղտնիք չի, որ այսօր հայ ժողովուրդը շատ բարդ իրավիճակում է գտնվում եւ կանգնած է պետականությունը կորցնելու վտանգի դիմաց: Շատերն այս օրերին վերլուծաբան են դարձել եւ պետությունը փրկելու քողի ներքո փորձում են անձնական ձգտումները կյանքի կոչել: Վախկոտը հերոս է ձեւանում, սուտն ու ճիշտը խառնվել են իրար: Ամեն ոք իրեն իմաստուն է կարծում, ամեն անփորձ պատկերացնում իրեն պետությունը փրկող եւ նույնիսկ սգավոր մայրերի ցավն է շահարկվում: Ամենացավալին էլ այն է, որ վարկաբեկվում է մեր բանակը: Իսկ այդ ամենը հոգեպես սպանում է հերոսածին մայրերին, որոնք մտածում են, որ իրենց որդիները ոչ թե հայրենիքի հերոսական պաշտպանության, այլ պետական այրերի դավաճանության զոհ են: Յուրաքանչյուր ոք ԶԼՄ-ներում եւ այլ հարթակներում մի լուր այնպես է մատուցում, կարծես թե դրանում շարադրվածի ականատեսն է: Տեղեկատվական դաշտը խեղդված է լուրերով եւ բամբասանքներով: Այնինչ, հարկավոր է միաբան լինել, չցածրացնել ու արժեզրկել մեր բանակն ու նրա հերոսական մաքառումները: Հասել ենք մի կետի, որ թշնամին մեզ դավաճան չի կոչում, մեր բանակն էլ դավաճանների հավաքածու չէ: Ինչ է, աշխարհի՞ն ենք ծիծաղեցնում մեր վրա, դա՞ է եղել մեր նպատակը: Իհարկե ոչ եւ երիցս ոչ:

1945 թ. խորհրդային զորքերի փայլուն հաղթանակների եւ զորավար Ժուկովի երկաթյա տրամաբանության արդյունքում Քեյթելը ստորագրեց Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիան: Սակայն եթե մենք չստորագրեինք համաձայնագիրը, մեր 30000 բանակը կընկներ շրջապատման մեջ: Գուցե իսկապես ճիշտ է նաեւ, որ Շուշին անհնար էր պահել եւ Ադրբեջանի զորքը մտնում էր Ստեփանակերտ: Այդ դեպքում ինչպե՞ս բացատրել այն տրամաբանությունը, որ 26 տարի այդ պահին սպասող թուրքական երկու պետությունները երբ կարող էին իսպառ վերջ դնել հակամարտությանը եւ ամբողջովին գրավել Արցախը, անտրամաբանորեն ոչ միայն կանգ առան, այլեւ համաձայնվեցին, որ ռուսները կանգնեցնեն պատերազմը եւ Ռուսական ռազմաբազա մտցնեն իրենց պատկանող Արցախ: Միանգամայն ենթադրելի է, որ հայերը չէին պարտվել, իսկ ադրբեջանական զորքը հյուծվել էր ու այլեւս մարտունակ չէր, որն էլ ստիպեց Ալիեւին գնալ այդ քայլին: Ե թ ե իսկապես ազերի բանակը հաղթում էր եւ հայկական բանակը շրջապատման մեջ էր, ուրեմն Արցախը նոյեմբերի 9-ից հետո այլեւս չպիտի լիներ, այնինչ այժմ նա գծում է սահման մի երկրի, որը իբր իրենն էր եւ հիմա արդեն այդ երկրում երրորդ պետության զորքեր են: Ենթադրում եմ, որ այստեղ մութ եւ անտրամաբանական բան կա: Այլապես ինչո՞ւ ռուսական զորքն այդպիսի կայծակնային արագությամբ տեղակայվեց Արցախում, որը ամենեւին էլ խաղաղապահ զորք չէ, այլ օդադեսանտային հատուկ զորամիավորում, դեռ ոչ մի տեղ խաղաղապահներին չի հաջողվել 1.5 օրում տեղակայվել անծանոթ երկրում: Կամ, ո՞րն էր տրամաբանությունը Ռուսական ամենաբարձր պաշտոնյաների արագ արձագանքման ջոկատի նման Հայաստան ժամանելն ու երկու կողմին թաքնված **մեսիջ** ուղարկելը, որ եթե որեւէ կողմ հրաժարվի համաձայնագրից, ապա արդյունքը կլինի պատերազմ ու արյունահեղություն; Ուշադրություն դարձրեք տրամաբանության բացակայությանը, քանի որ այդ **մեսիջը** ուղղված է նաեւ իրեն հաղթող համարող Ադրբեջանին: Եզրակացությունը մեկն է՝ հայկական բանակը զբաղեցնում էր ամուր ու զորեղ դիրքեր եւ դեռ կարող էր ոչնչացնել թշնամուն: Անկասկած, ռուսները թույլ դաշնակցի համար ուժեղ քայլ կատարեցին, բայց մեզ չեն կարողանում հասկանալ եւ չեն տեսնում Ժուկովյան երկաթյա տրամաբանության աքսիոման, այստեղ ավելի շուտ ապացուցման կարիք ունեցող տրամաբանության թեորեմա է:

Պատերազմում կրած պարտությունը անկումային տրամադրություններ է առաջացրել, շատերն են խոսում արտագաղթի մասին: Հատկապես զավեշտալի է ինտելիգենտնիկների գրառումները մինչեւ վերջ կռվելու ու պատվով մեռնելու մասին: Նրանք հիմնականում բանակում չծառայածներ են եւ առիթը ներկայանալու դեպքում նորից պահի տակ կթռնեն: Մինչդեռ հարկավոր է գտնել եւ հանրությանն առաջարկել տարածաշրջանում Հայաստանի գոյատեւման բանաձեւը, քանի որ արդեն մի հազար տարի լավ գիտենք, թե թուրքն ով է, ու ինչ հակումներ ունի: Կռվելու եւ պատվով մեռնելու կարգախոսն այլեւս հնացած ու անընդունելի է: Ապագան կերտել է պետք գլուխն աշխատեցնելով, ինքնագովազդը կեղծ ազգասիրությամբ եւս անընդունելի է: Հարկավոր է գիտակցել վերջապես, որ հրեա ազգը, որը դարերով պետություն չուներ, այժմ ունի, որ Իսրայելի տարածքն անապատային է, չունի թանկարժեք մետաղ կամ նավթ, շրջապատված է արաբական՝ իրեն թշնամի պետություններով, գտնվում է Պաղեստինի տարածքում, ունի ռազմական հզոր արդյունաբերություն, բայց նրա հետ հաշվի են նստում բոլոր պետությունները: Որ Հայաստանը եւս շրջապատված է թշնամիներով, ունի որոշ քանակությամբ թանկարժեք մետաղներ, շատ բերրի հողեր եւ մեծ քանակությամբ խմելու քաղցր ջուր: Որ հայերը ամենախելացի ազգերից են, սակայն նման տխուր կարգավիճակ ունեն: Պատճառն այն է, որ հատվածական մտածողության կրողներ ենք, միասնական չենք, ունենք խելացի անհատներ, բայց ամբողջություն չենք կազմում, չենք լրացնում իրար, որից էլ շատ ենք տուժում եւ դա մեր խելքի (գիտելիքն ու խելքը չշփոթենք) պակասից է: Մեծ պոտենցիալ ունենք, որը չենք զարգացնում եւ կիրառում, կա՛մ ուրիշ երկրի համար ենք կիրառում: Այսօր սովորելն էլ արդեն հարգի չէ, որովհետեւ ներկայիս Հայաստանյան փողատերերը սովորելով չեն դիզել իրենց կապիտալը, այլ ավելի շատ՝ չսովորելով:

Այժմ հարկավոր է թոթափել, ձերբազատվել անտանելի եզրույթներից, համատարած քայլեր ձեռնարկել պետությանը (եւ ոչ չինովնիկների) օգուտ տալու համար ու մի օր մեր մասին էլ յուրաքանչյուր երկրի քաղաքացի կարտահայտվի այնպես, ինչպես մենք հիմա՝ Իսրայելի մասին: Հստակ է մեկ բան. այսօր մենք նոր քաղաքական մտածողության կարիք ունենք: Այսօր երջանկահիշատակ Կարեն Դեմիրճյանի բառերով ասած՝ մեզ մուրճերի զարկ է հարկավոր, այլ ոչ թե ատամների կրճտոց, բարություն, այլ ոչ թե չարություն եւ նախանձ, համախմբում, այլ ոչ թե հաշիվների մաքրում: Հասարակությունը պետք է զգոն լինի, որպեսզի առանձին չկայացած մարդիկ պահը չօգտագործեն իրենց շահադիտական նպատակների, փառամոլության ծարավը հագեցնելու եւ վրեժխնդրության համար: Չմոռանանք նաեւ, որ ամեն Թալեաթ իր Թեհլիրյանն ունի եւ յուրաքանչյուր Էնվեր փաշա ունի իր Հակոբ Մելքումովը:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Էլի՞ ստելու փորձ



Արցախից ու ՀՀ-ից ազերիներին տարածքներ հանձնող իշխանությանը պետական դավաճանության մեջ մեղադրելը մեր օրերի տխուր իրողություններից է: Այս ընթացքում առաջին պլան է մղվում նաեւ երկրի տնտեսության ողբալի վիճակը, որի ականատեսը դարձանք սյունիքյան իրադարձությունների ընթացքում: Գյուղացիներից մեկի այն մտահոգությանը, որ հանձնվող հողերի հետեւանքով իրենք զրկվում են անասուններին կենսականորեն անհրաժեշտ արոտավայրերից, ՀՀ էկոնոմիկայի տարօրինակ գնահատականներով արդեն իսկ առանձնացած նախարարը նշեց. անասուններին հարկ է գոմերում պահել: Զրույցին մասնակցող վարչապետն ու քպական նախարարն էլ իրենց հերթին ավելացրին, որ ծրագրեր կան որպես անասնակեր օգտագործել առվույտ կոչվող խոտաբույսը: Եվ վերջ, գյուղացու մտահոգությունները անհարկի են, լուծումները գտնված:

Ավաղ, քանզի գյուղացու ու բարձրագույն իշխանավորների միջեւ կայացած սույն զրույցը յուրօրինակ ստի հերթական դրսեւորում էր: Ապացո՞ւյց եք ուզում, խնդրեմ: Ամեն անգամ ՀՀ-ում արտադրված կենդանական ծագման մթերքները գովազդելիս սեփականատերերը հպարտությամբ հայտարարում են, որ դրանք ստացվել են ալպիական հռչակվող արոտավայրերում պահված անասունների կաթից ու մսից: Իսկ ահա հիմա, երբ պետք է արդարացում գտնել հանձնվող գյուղամերձ արոտավայրերի համար, պարզվում է անասուններին պետք է գոմերում պահել ու չեղած անասնակերով կերակրել: Թե ո՞ր աշխարհամասի ո՞ր երկրներում են նման կերպ վարվում, դա կարեւոր չէ, նպատակն այդ պահին անասնապահին շփոթեցնելն ու լռեցնելն է: Եթե ալպյան երկիր Շվեյցարիան նկատի ունենք, այնտեղ յուրաքանչյուր ֆերմեր իր ցանկապատած արոտավայրերն ունի, անասունները դրանց կանաչն ու բարձր սննդարարությամբ օժտված թիթեռնածաղկավոր կերաբույսերն են վայելում:

Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Լեւոն Վարդեւանյանն իր բազմաթիվ ուսումնասիրություններում է պնդել, որ անասնագլխաքանակների մթերատվության 40-50 տոկոսը ստացվում է արոտային շրջանում: Նա հիմնավորում է. եթե կանաչ կերերի քանակը կազմում է տարվա ընթացքում օգտագործած կերերի մոտ 30 տոկոսը, ապա կաթի արտադրությունը շահութաբեր է, իսկ մինչեւ 15 տոկոսի դեպքում՝ ոչ:

Ինչ մնում է չեղած առվույտով անասնապահին շփոթեցնելուն, նկատենք, որ ընդամենը 5 տարի առաջ ՀՀ բյուջեից զգալի ֆինանսներ հատկացվեցին առվույտի սերմ ձեռք բերելու նպատակով, որն այդ խոտաբույսը մեզանում աճեցնելու ավանդույթ չունենալու պատճառով պարզապես ձախողվեց: Հիմա փո՞րձ է արվելու երկրի գրեթե չեղած բյուջեից նոր ծախսեր իրականացնել, թե՝ սովորություն դարձած հերթական սուտն էր, ասացին, անցավ գնաց: Առվույտի ջատագովը երբեմնի նախարար Ս. Կարապետյանն էր, որի հետնորդներ Ա. Խաչատրյանը, Ի. Առաքելյանը, Գ. Գեւորգյանը, Ա. Քամալյանը եւ գյուղոլորտի պատասխանատու դարձած էկոնոմիկայի նախորդ նախարար Տ. Խաչատրյանը երբեւէ դրան չանդրադարձան: Հիմա ի՞նչ պատահեց...

Սյունիքյան անհասկանալի այցն ու տարօրինակ հետդարձը ՀՀ տնտեսությունում ծավալվելիք գործընթացների վերաբերյալ բազմաթիվ հարցերի տեղիք են տալիս: Անորոշությունից մինչեւ հանցավոր անփութություն, որոնք, ավաղ, ծանր բեռ են դառնում մի կերպ հարկեր մուծողների վրա: Սա ընդամենը տարեվերջյան ահազանգի մի մասն է, որին կանդրադառնանք գալիք ողջ տարվա ընթացքում:

Արարիչը մեզ բավարար հողաջրա-ջերմային պայմաններ տվել է. թե ինչպես կօգտվենք դրանցից, ցույց կտա առաջիկա 2021-ը:

Ասված աջակից մեր համեստից մինչեւ անհրաժեշտություն խնդիրների բացահայտմանն ու լուծմանը:

# Ի՞նչ է մնում մեզ անել

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունը ապրում է բավականին ծանր ժամանակներ: Սակայն պատմության մեջ առաջին անգամը չէ, որ մեր երկիրը հայտվել է նման անելանելի կացության մեջ: Կորված Արցախ, մեծաթիվ մարդկային կորուստներ, ներքաղաքական պայթունավտանգ իրավիճակ, քայքայված տնտեսություն, իրավիճակին չտիրապետող կառավարություն, կարճ ասած՝քաոս:

Ի՞նչ է մնում մեզ անել այս սոսկալի պատկերից հետո: Այս հարցը սակայն ունի երկրորդ կողմ՝ ի՞նչ կարող ենք անել մենք: Մենք պետք է դասեր քաղենք այս հուժկու հարվածից եւ շարժվենք առաջ միայն հզորանալու մտքով: Ակնհայտ է, որ մոտակա տարիների ընթացքում մենք չենք կարող մտածել անգամ Արցախի կորցրած հսկայական տարածքները վերադարձնելու մասին: Նախ սրա առաջին պատճառը՝ Արցախում Ռուսաստանի ազդեցությունն է, որը օր օրի ավելի է մեծանում, եւ երկրորդը՝մեր պետության մեղմ ասած անբավարար տնտեսական եւ ռազմական միջոցներն են:

Լավ եւ զարգացած տնտեսություն ունենալը երկար տարիներ է ինչ շարունակում է մեզ համար մնալ սոսկ երազանք, ինչի իրագործումը մնում է մշուշում: Տնտեսությունը պետության ողնաշարն է եւ եթե այն ամուր լինի, պետությունը կսկսի հեշտությամբ լուծել այլ ոլորտներում ծառացող խնդիրները, օրինակ՝մեզ համար այդչափ կարեւոր ռազմարդյունաբերության եւ բանակաշինության բնագավառներում:

Ներկայումս շատերն են այն կարծիքին, որ զինված ուժերը եւ բանակը կորցրել են իրենց նախկինում ունեցած դերակատարությունը եւ արդեն դարձել են պակաս կարեւոր, քանզի պատերազմն ավարտվեց եւ այն ինչ պետք է լիներ, եղավ: Սակայն սա միանշանակ սխալ թեզ է: Ներկա պահին հզոր եւ մարտունակ զինված ուժեր ունենալը առավել կարեւոր է քան երբեւէ: Հայաստանը միանշանակ պետք է դառնա ավելի ռազմականացված երկիր, քան նախկինում էր: Դա մեզ առաջին հերթին պարտադրում է մեր աշխարհագրական դիրքը, նաեւ՝ մեր նոր «բարենպաստ» սահմանները: Բացի այդ, մեզ արդեն գործնականում պարզ դարձավ, որ ի դեմս Ադրբեջանի, մենք ունենք Թուրքիայի նման հզոր թշնամի, որին ամենեւին էլ չեն հետաքրքրում ոչ Հադրութը, ոչ Քարվաճառը եւ ոչ էլ Շուշին: Էրդողանի կառավարությունը ունի ավելի հանդուգն ցանկություններ, որոնք չի թաքցնում: Վերջին պատերազմում ունեցած մեր անհաջողությունների համար մենք մեզ մխիթարում էինք նրանով, որ պատերազմում էինք ոչ թե Ադրբեջանի, այլ Թուրքիայի նման հզոր բանակ ունեցող պետության դեմ: Սակայն իրականում սա ոչ թե մխիթարանք է այլ ողբերգություն, որովհետեւ Թուրքիայի պես արյունարբու պետության հզորացումը, մխիթարանք է դարձել մեզ պես հարուստ կենսագրություն ունեցող երկրի համար: Ի՞նչ էր Թուրքիան եւ ի՞նչ դարձավ: Ի՞նչ էինք մենք եւ ի՞նչ մնացինք: Սա ցավոտ, բայց միաժամանակ սթափեցնող հարցադրում է:

18-ից 20 տարեկան զինվորների հզոր կռիվը բավարար չեղավ հինգերորդ սերնդի պատերազմում հաղթելու համար: Հաշտվելով այս ցավոտ իրականությանը, մենք պետք է հաղթահարենք եւ չհամակերպվենք պարտվողի հոգեբանության հետ, այլ զինվենք եւ ստեղծենք նոր դարաշրջանին համապատասխան զինված ուժեր, ձեռք բերելով եւ ինչու ոչ, նաեւ արտադրելով այնպիսի զինատեսակներ, որոնք արժանի կլինեն մեր հերոս զինվորների կողմից կիրառվելու:

Մենք դատապարտված ենք ունենալ ուժեղ բանակ, քանզի ի վերուստ դատապարտվել ենք՝ ունենալով Թուրքիայի պես «հարեւան»:

Սակայն բացի այս ամենից մեր նոր սերունդների եւ նորագույն պատմության մեջ պետք է դաստիարակվի եւ ներդրվի այնպիսի արժեհամակարգ, որում առաջնային հորիզոնականում կլինի հայրենիքը ու հայրենասիրությունը: Պետք է կատարվի այնպիսի սերնդափոխություն, որը մեր նոր Հայաստանում ոչ թե փնտրենք եւ դատապարտենք դավաճաններին, այլ պարզապես չլինեն դավաճաններ ու հայրենիքի գինը չիմացողներ:

Այսօր Շուշիում մնացած Վազգեն Սարգսյանի արձանի համար ցավող մարդկանցից շատերը մոռանում են, որ նույն սպարապետին իր իսկ երկրում սպանեց հայը, անհավասարակշիռ հայերի մի բանդա, իրագործելով թշնամու վաղեմի երազանքը: Ցավով պետք է նշել, որ մենք պարտվեցինք ոչ թե 2020-ին, այլ դեռեւս 1999 թ. հոկտեմբերի 27-ին, երբ հայի ձեռքով գլխատվեց մեր հաղթանակած ու պատմություն կերտող իշխանությունը: Այս ամենից հետեւություն, որ քանի դեռ մենք չենք առողջացել եւ ուժեղացել մեր երկրի ներսում, չենք կարող մտածել մեծ հաղթանակների մասին:

Արցախյան երկրորդ պատերազմը Հայաստանի վրա թողեց մի մեծ սպի, որը հնարավոր կլինի բուժել միայն ամուր պետականություն կառուցելու դեպքում:

Մեզ մնում է համախմբվել եւ սկսել կառուցել մի այնպիսի նոր պետություն, որի հետ չեն ցանկանա խոսել ուժի լեզվով եւ որ այն հարկ եղած դեպքում կլինի պատերազմ պարտադրողը, այլ ոչ թե պարտադրվածը:

Մենք պարտավոր ենք գիտակցել, որ այլեւս ետ քայլ դնելու տեղ չունենք:

ԳԵՎՈՐԳ ՄՈՂՐՈՎՅԱՆ
ՀՊՄ Հեռուստառադիոլրագրության 3-րդ կուրսի ուսանող

# Դարձեալ չորս նոր հրատարակութիւն «Ջահակիրից»

Ինչպէս պարբերաբար տեղեկացրել է «**Ազգը**», եգիպտահայ «**Ջահակիր**» շաբաթաթերթն իր աշխատակից, ճանաչուած երաժշտագէտ եւ հրապարակախօս **Հայկ Աւագեանի** աշխատասիրութեամբ ամէն տարի հրատարակում է եգիպտահայութեան պատմութեանն ու մշակոյթին առնչուող գրքեր, որոնք տպագրւում են սահմանափակ տպաքանակով եւ բաժանւում անվճար:

2020 թուականի ջահակիրեան հրատարակութիւններն են՝

ա) Հայկ Աւագեանի «**Ալեքսանդր Խատիսեանի պատմական այցելութիւնը Եգիպտոս եւ Հայաստանի Անկախութեան Փոխառութիւնը. ուղի մը հաւաքականութենէ դէպի անձնականութիւն**» 80 էջանոց գրքոյկը, որը նկարագրում է Հայաստանի Հանրապետութեան պատուիրակ Ալեքսանդր Խատիսեանի պաշտօնական այցելութիւնը Եգիպտոս (1920, օգոստոսի 17-24)՝ կազմակերպելու համար Հայաստանի Անկախութեան Փոխառութիւնը Հայաստանի տնտեսութիւնը եւ բանակը զարգացնելու նպատակով: Ամբողջ եգիպտահայութիւնը ոտքի է կանգնել՝ ընդունելու նորանկախ Հայաստանի պատուիրակը, որի մեկնումից յետոյ յատուկ կազմուած յանձնախմբերը յաջողութեամբ իրականացրել են փոխառութեան գործընթացը: Սակայն Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, հակառակ բանկին պահ տուած գումարները իւրացնելու փորձերին, մի քանի շաբաթ յետոյ աւանդ դրուած բոլոր գումարները վերադարձուել են փոխատուներին:

բ) Հայկ Աւագեանի «**Զապէլ Եսայեանի երկու այցելութիւնները Եգիպտոս (1918-1920)**» 38 էջանոց գրքոյկը: Զապէլ Եսայեանի անդրանիկ այցելութիւնը Եգիպտոս եղել է 1906-1907 թթ., որի ընթացքում նա շփուել է Արփիար Արփիարեանի, Վահան Թէքէեանի, Միքայէլ Կիւրճեանի եւ այլոց հետ: Երկրորդ անգամ եղել է 1918 եւ 1920 թթ.: Այս այցն ունեցել է աւելի հրապարակախօսային բնոյթ: Ներկայ գրքոյկը ներկայացնում է Զապէլ Եսայեանի այս երկու այցելութիւնների ուղեգրութիւնները՝ վերահրատարակելով առաջին այցելութեան երկու յօդուածները եւ երկրորդ այցելութեան ընթացքում Աղեքսանդրիայում ունեցած բանախօսութիւնը եւ Կահիրէի զեկոյցի սղագրութիւնը:

գ-դ) **Գաբրիէլ Լէքէճեան**, Ժողովածու լուսանկարների երկու հատորով, Ա. Հատոր (549 էջ) եւ Բ. հատոր (573 էջ), որ բովանդակում են եգիպտահայ լուսանկարիչ Գաբրիէլ Լէքէճեանի (1848 կամ 1853 - 1921) շուրջ 950 լուսանկարները: Դրանք ներկայացնում են փարաւոնական, իսլամական եւ ղպտիական յուշարձաններ, Կահիրէի փողոցները եւ տեսարաններ, տեղական կանանց տիպարներ, արեւելեան պար, Նեղոսը, արմաւենիներ եւ այլն: Առաջին անգամ ներկայացուած է նաեւ Լէքէճեանին կենսագրութիւնը:

Հատորները կարելի է կարդալ եւ ներբեռնել հետեւեալ յղումներով՝

https://archive.org/details/tchahagir-supplement-no.-36

https://archive.org/details/tchahagir-supplement-no.-35

https://archive.org/details/tchahagir-supplement-no.-37

https://archive.org/details/tchahagir-supplement-no.-38

Ա. Բ.

# Հայի արարող ձեռքը

Ազգային գորգերի մեջ ամփոփվում է ժողովրդի մտածողությունը, ազգային նկարագիր տվող մշակութային արժեքը:

Գորգագործական մշակույթը Արցախում խոր արմատներ ունի. այն մեզ տանում է հազարամյակներ առաջ, ներկայացնում հին աշխարհի եւ հատկապես Արցախի հնագույն մշակույթն ու կենցաղը: Շատերին է հայտնի արցախյան բրդյա ձեռագործ գորգերի համբավն ու նշանակությունը: Եվ այս առումով հատկապես պատասխանատու եւ կարեւոր առաքելություն ունի Արցախի Հանրապետությունում իր գործունեությունը ծավալած «Ղարաբաղ Կարպետ» ընկերությունը:

Սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի ժամանակ այդ ընկերության Ստեփանակերտի եւ Ճարտարի արտադրամասերը վնասվել են արկերի հարվածներից: Շուշի քաղաքը հանձնվեց թշնամուն, այնտեղ մնացին նաեւ ընկերության արտադրական գույքն ու պահեստավորված գորգերը:



«Ամենավատ երազում անգամ չէինք պատկերացնի Շուշիի անկումը, դա նշանակում է Արցախի անկում: Ամենամեծ արժեքը հայրենիքն է, եթե պետք է ընկներ Շուշին, պետք է կորցնեինք հայրենիքը, այլեւս հետաքրքրական չէր արտադրամասը փրկելը»,- ասում է «Ղարաբաղ Կարպետ» ընկերության տնօրեն **Սեւակ Խաչատրյանը**:

Տնօրենը շեշտում է, որ գորգագործության մեջ կարեւորը մարդիկ են, ոչ թե սարքավորումները: Իրենք ավելի մեծ կորուստներ են ունեցել. պատերազմի ժամանակ զոհվել է ընկերությունում արտադրական կարեւոր գործառույթ կատարող աշխատակիցը, իսկ աշխատողներից ոմանք զոհեր,անհետ կորածներ,վիրավորներ ունեն ընտանիքներում:



«Շուշիի արտադրամասից առայժմ 5 աշխատող է վերադարձել Ստեփանակերտ եւ աշխատում է այնտեղ: Նրանցից 3-ը գորգ են գործում, 2-ը՝ կարպետ: Մոտ 30 գորգագործ Հայաստանում է ապաստան գտել: Մտածում ենք Շուշիի արտադրամասի փոխարեն այստեղ ապաստանածների համար արտադրամաս հիմնել: Դա թողել ենք հաջորդ տարվան, մինչեւ բնակարանով հուն վերադառնան մարդիկ»,- նշում է Սեւակը ավելացնելով, որ Արցախում բոլոր պայմանները ստեղծվել էին գորգագործությունը զարգացնելու համար,բայց քանի որ Շուշիի բնակիչները վերադառնալու տեղ չունեն, պետք է նրանց համար մի բան մտածել:

«Միայն հայկական գորգերն են կրկնակի հանգույցով գործվում, որի շնորհիվ դարեր շարունակ պահպանվում են:Դրանցից յուրաքանչյուրը պատմություն ունի, բոլորի նշանակությունն ու բացառությունը գրառել ենք: Մեր գորգերը նաեւ դրանով են տարբերվում աշխարհում: Զբոսաշրջիկների համար դա շատ հետաքրքրական է, զարմանքով հարցնում են, թե ինչու պետք է գորգի զարդանախշը ինչ-որ բան նշանակի», մեզ հետ զրույցում ասաց փորձառու գորգագործ **Համմիկ Մխիթարյանը**, ապա ավելացրեց, որ գորգերի պատմությունը լավ հանրայնացնելը նպաստում է նաեւ վաճառքի ծավալն ավելացնելուն»:

Երկար տարիներ ադրբեջանական գորգահավաքները Արցախի գյուղերից հավաքել են հին՝ հարյուրավոր տարիների պատմություն ունեցող գորգերը, որոնք այսօր պահվում եւ ներկայացվում են Բաքվի թանգարաններում՝ որպես «ադրբեջանական հին գորգեր»: Այսօր ադրբեջանցիներն իրենց արտադրության ներկայացման մեջ հպարտանում են Ղարաբաղյան գորգերով՝ ներկայացնելով այն որպես իրենց սեփականը:

«Ամենակարեւորը մենք կարողացանք տեղ հասցնել, որ արցախյան գորգը հայկական գորգ է եւ ոչ թե ադրբեջանական, կարողացանք հակազդել Ադրբեջանի կեղծարարությանը՝ մշակույթը յուրացնելու հարցում»,- հայտնեց ընկերության տնօրենը:

Հայն այսօր էլ ստեղծում եւ արարում է պահելով իր ազգային դիմագիծը: Նրա արարող ձեռքը կարելի է տեսնել ամենուր:

**ՀԱՍՄԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
**ՀՊՄՀ Լրագրություն 3-րդ կուրս**

# Զինվորը իր գործը ավարտված չի համարում

Քանի հազարավոր մահճակալներ մնացին դատարկ, թե՛ տներում, թե՛ զորամասերում:

Զինվորի սրտում եւ աչքերում այնքան մեծ ցավ կա...

«Ծնողները իրենց հույսը չեն կորցնում, գալիս են էստեղ՝ Ղարաբաղ, եւ իրենց որդիներին են փնտրում: Մեզ են հարցնում, թե որտեղ են իրենց որդիները... Էս հարցը, երբ տալիս են, զղջում ես, որ ողջ ես մնացել, որովհետեւ մենք շատ լավ գիտենք որտեղ են մեր ընկերները», պատմում է Արցախում ծառայող ժամկետային զինծառայողներից մեկը:

Մեր զինվորների սուրբ արյունը հողի վրա դեռ չչորացած՝ սրբապիղծ թշնամին ոտք դրեց այդտեղ:

«Ջաբրայիլ, Ֆիզուլի, Հադրութ, Մարտունի... ամեն մի շրջանում ընկերներ ենք կորցրել. հիմա ավելի դժվարա քան պատերազմի ժամանակ, այդ ժամանակ ցավ ու սով չէինք զգում, պատասխանատվության զգացումը ամեն հարցի պատասխան տալիս էր:

Էնպիսի հիշողություններ ու պորումներ ունենք, որ ամբողջ կյանքում մեր անբաժան ուղեկիցն են լինելու: Հիմա մենակ ուզում եմ գնամ ընկերներիս շիրիմին. սպասում են», ասում է զինվորը:

Մեր զինվորները մեկ բռունցք դարձած պատրաստակամություն են հայտնում հարկ եղած դեպքում նորից մեծ պատասխանատվությամբ մասնակից դառնալ հայրենիքի համար մղվող պատերազմում, ասելով՝ որ իրենց գործը ավարտած չեն համարում:

Եթե այս ամենը գիտակցում է ժամկետային զինծառայողը, ապա վստահ կարող ենք ասել, որ ապագայի մեր ուղին գծված է:

**ՕՍԻՊՅԱՆ ԼԱՈՒՐԱ**

# Վիրավոր տղաները կունենան ձեռքի գերժամանակակից պրոթեզներ




Ազգային ժողովի պատգամավոր, «Իմ քայլը» խմբակցության անդամ՝ **Նարեկ Մկրտչյանը** վերջերս ֆեյսբուքյան իր էջում կատարել է գրառում որտեղ նշվում է, որ նախաձեռնել է մի շարք առողջապահական ծրագրեր, որոնք ներառում են արտասահմանցի բժիշկների այց, իսլանդական ձողաձկան (cod) կաշվից ստացած մաշկային տրանսպլանտների, ամերիկյան «Genadyne» ընկերության բարձրակարգ դեղամիջոցների եւ վերքերը փակող վակուումային սարքերի, ՀՀ ԱՆ պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնի համար ամենագնաց մեքենայի եւ անհրաժեշտ բժշկական միջոցների ձեռքբերում եւ այլն:

Գրառման մեջ նշվում է, որ տվյալ նախաձեռնությունը վերաբերում է մարտական գործողությունների ընթացքում ձեռք ու ոտք կորցրած զինվորների պրոթեզավորման խնդրին:

Ծրագիրը իրականացվելու է՝ «Հայրենիքի պաշտպանի» Վերականգնողական կենտրոնի հետ համագործակցությամբ, որտեղ շուտով Հայաստան համահայկական հիմնադրամի եւ Armeniefonds Nederland-ի աջակցությամբ գործելու է պրոթեզավորման գերմանահոլանդական ժամանակակից լաբորատորիա

Նարեկ Մկրտչյանի խոսքով, պայմանավորվածությունը ձեռք է բերվել պրոթեզների արտադրությամբ զբաղվող իսլանդական աշխարհահռչակ Ossur ընկերության հետ՝ ձեռքբերելու գերժամանակակից i-Limbe ձեռքի պրոթեզներ:

Իսլանդական Ossur-ին զուգահեռ՝ ձեռքի ժամանակակից պրոթեզներ գնելու պայմանավորվածություն է ձեռք բերվել նաեւ գերմանահոլանդական «Otto-bock» ընկերության հետ:

Ծրագիրն իր մեջ ներառելու է նաեւ կրթական բաղադրիչ՝ վերապատրաստման նպատակով իսլանդացի եւ հոլանդացի մասնագետների այց, հայաստանյան մասնագետների վերապատրաստում արտերկրում եւ այլն: Իսլանդական Ossur-ի ձեռքերի պրոթեզավորման լավագույն մասնագետներից մեկի՝ Վիբե Հայդեմանի այցը, որը աշխատելու է «Զինվորի տան» մասնագետների հետ:

Ծրագրի հաջող իրականացման դեպքում առաջին անգամ Հայաստանում կտեղադրվեն նման կարգի պրոթեզներ: Այս նախաձեռնության շահառու են լինելու հայրենիքի պաշտպանության համար ձեռքերը կորցրած մեր զինծառայողները:

**ԷԼԱԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
**ՀՊՄՀ կուլտուրայի ֆակուլտետ**
**Լրագրության բաժին 3-րդ կուրս**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԹԵՔԵՅԱՆ ՓԱԲԼԻՇԻՆԳ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
**e-mail:** azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960,
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Թեքեյան Փաբլիշինգ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 24.12.2020, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: